

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ  
ՀԵՐՈՍԱԴՊԱՏՈՒՄԻՑ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԴՐՎԱԳՆԵՐ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ԳԻՏԱՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

9 (47. 2014)  
h-55

ՀՀ ԱԱԾ ԳԻՏԱՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

գիտության և գիտամանկավարժական  
կադրերի պատրաստման բաժին

5138

**ՐԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱԿԱՐԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ  
ՀԵՐՈՍԱԴՊԱՏՈՒՄԻՑ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ**

Հեղինակ-կազմողներ՝ Թումոյան Ա. Օ., Քինակցյան Ա. Լ.

Խմբագրությամբ՝ իրավաբանական գիտությունների  
թեկնածու դոցենտ Ա. Լ. Քինակցյանի



Հրատարակվում է ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի  
խորհրդի որոշմամբ:

Թումոյան Աննա Օգսենի  
Քինակցյան Արմեն Լևոնի

Հետախուզության և հակահետախուզության հերոսապատմից. Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության դրվագներ / ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն. Հեղ.-կազմողներ Թումոյան Ա. Օ., Քինակցյան Ա. Լ. Խմբագրությամբ՝ Ա. Լ. Քինակցյանի. - Եր., 2014, էջ:

Այս գիրքը Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության մարմինների պատմության հիմնական փուլերն ուրվագծող փաստավավերագրական աշխատություն է, որում ի մի են բերված թեմային վերաբերող հիմնական նյութերը, սկսած 1918թ. մայիսյան հերոսամարտերից, պետական ապարատի, բանակի, մասնավորապես հետախուզական և հակահետախուզական ստորաբաժանումների ձևավորումից մինչև Թուրքիայի և Ադրբեջանի թշնամական քաղաքականության դեմ այդ կառույցների ձեռնարկած առանձին փայլուն գործողություններ, հանրամատչելի ձևով նկարագրված են 20-րդ դարասկզբին Հայոց պետականության կերտման գործում անվտանգության մարմինների դերն արտացոլող առանցքային պատմական դրվագները:

Աշխատության հրատարակման գաղափարը ծագել է Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության մարմինների կազմավորման 95-ամյակի առիթով: Հրատարակման հիմնական նպատակն է ծանոթացնել հանրությանը ազգային անվտանգության մարմինների անցյալի կարևոր ձեռքբերումներին, ոգեկոչել Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության անձնավեր աշխատակիցներին, բացահայտել անհայտ հերոսներին, ներկայացնել նրանց սխրագործությունները՝ նպաստելով հատկապես երիտասարդ սերնդի մոտ պետական մտածելակերպի և բարձր իրավագիտակցության արմատավորմանը:

© ՀՀ կառավարությանն առընթեր ազգային  
անվտանգության ծառայություն, 2014 թ.

© Թումոյան Ա. Օ., 2014 թ.

© Քինակցյան Ա. Լ., 2014 թ.

## ԽՈՍՔ-ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի կողմից պատրաստված այս փաստագրական աշխատությունն այն եզակի գրքերից է, որը, նվիրված լինելով անվտանգության մարմինների անցյալի դրվագներին, բացառիկ հնարավորություն է ընձեռում հասարակությանը ծանոթանալ հայտնի պատճառներով իրեն նախկինում անհայտ հերոսներին:

Հետախուզությունը մարդկության և առանձին ժողովուրդների պատմաքաղաքական զարգացման ողջ ընթացքում եղել է պետությունների գերակա ռազմավարական շահերի կենտրոնակետում: Որ տեսանկյունից էլ մոտենանք հիմնահարցին, ակնհայտ է, որ հետախուզությունն առաջին հնագույն մասնագիտություններից է, որը գոյություն ունի ուղիղ այնքան, ինչքան գոյություն ունեն մարդկությունը և նրա անմիջական ուղեկից պատերազմները: Բնականաբար, հետախուզությունը պատկերացնել և ներկայացնել առանց հետախույզների, պարզապես անհնար է: Հետախույզն ամեն մի պետության բարձրագույն ղեկավարության և զորքերի հրամանատարության կողմից կոչված է եղել զբաղվել ցանկացած իրադրությունում և ցանկացած ժամանակ գործող կամ հնարավոր հակառակորդի մասին տեղեկությունների հավաքմամբ, ուսումնասիրմամբ և ընդհանրացմամբ,

իսկ այնուհետև ժամանակին դրանց հաղորդմամբ՝ հակառակորդի դեմ անհրաժեշտ հակաքայլերի ձեռնարկման համար:

Հաճախ առօրյա դատողությունները տեղապտույտ են տալիս այն բանի շուրջ, որ, ամեն մի երկրի տեսանկյունից, հակառակորդ երկրի հետախույզը լրտես է, և հակառակը: Սակայն ակնհայտ է, որ, ի տարբերություն նեղ առումով ընկալված լրտեսի, հետախույզները, հիրավի, այն նվիրյալներն են պետության գաղափարին և էությանը, որոնք աշխատում են հանուն սեփական հայրենիքի պատվի և արժանապատիվ կեցվածքի: Նրանց առաջնորդում են բարձր գաղափարաքաղաքական մոտեցումները, որոնք շատ հաճախ նրանց համար դառնում են սրբազան նվիրում: Նրանք արհեստավարժ և փորձված, համակողմանիորեն պատրաստված և բարձրակիրք *«պրոֆիներ» են*, որոնք մասնագիտական պատրաստության շատ դժվարին դպրոց են անցնում՝ ներկայացնելով ամեն մի երկրի համապատասխան գերատեսչությունը: Ժամանակի ընթացքում, պետությունների զարգացմանը զուգընթաց, հետախույզի վտանգալից և դժվարին մասնագիտությունը պատշաճ հարգանքի արժանացավ հասարակության կողմից: Հետախույզների շարքում տեղ գտան պետական կառավարման աստիճանասանդղակում բարձր դիրք գրավող անձինք՝ պետական-հասարակական գործիչներ, հանրահայտ մտավո-

րականներ, գրողներ ու նկարիչներ, գիտնականներ և մար-  
զիկներ:

Հետախույզը, հաճախ հայտնվելով ծայրահեղ իրավի-  
ճակներում, կարողանում է դուրս գալ դրանցից՝ շնորհիվ իր  
բարձր մտավոր կարողությունների, համարձակության, հնա-  
րամտության, իր վրա պատասխանատվություն վերցնելու  
կարողության, մասնագիտական բարձր պատրաստվածու-  
թյան:

*Հետախույզները բոլոր ժամանակներում եղել են պե-  
տության անտես աչքերը՝ հառված դեպի թշնամին: Հետա-  
խույզները պետության անտեսանելի, ամենահավատարիմ  
և պատրաստված զինվորներն են թշնամու մեջ:*

Պետության զարգացման ցանկացած փուլում և ցան-  
կացած հասարակարգում հատուկ ծառայությունները՝ հե-  
տախուզական և հակահետախուզական համակարգերը,  
պետական կառույցի անբակտելի բաղկացուցիչ են եղել և  
դեռ երկար ժամանակ կլինեն այդպիսին, առանց որի ոչ մի  
պետություն գործնականում չի կարող երկար գոյատևել:  
Այդ ծառայությունների գործունեությունը ըստ էության նպա-  
տակաուղղված է ազգային-պետական անվտանգության  
հիմնախնդիրների լուծմանը, որոնց իրագործման գլխավոր  
դերակատարները հետախույզներն ու հակահետախույզներն  
են: Ընդ որում, հարկ է նշել, որ իրենց գործելակերպում այդ  
ծառայությունները սերտորեն շաղկապված են և իրակա-

նում չեն կարող արդյունավետորեն գործել առանց մեկը  
մյուսի: Ի դեպ, հարկ է նաև հատուկ ընդգծել, որ Հռոմեա-  
կան Մեծ կայսրության մեծադորդ հաղթարշավներում ի-  
րենց անգնահատելի և անուրանալի վաստակն են ունեցել  
տերության հատուկ ծառայություններում ընդգրկված ան-  
ձինք՝ հետախույզները, որոնք տեղին և անվրեպ հայթայ-  
թել են անհրաժեշտ տեղեկատվությունը հակառակորդի  
հնարավոր գործողությունների պլանների, զորքերի տեղա-  
շարժերի, տեղաբաշխման, թվաքանակի և այլ կարևոր  
հարցերի վերաբերյալ:

Հետախուզական գործի փառավոր ավանդույթներ գո-  
յություն են ունեցել նաև Հին և Միջնադարյան Հայաստա-  
նում, Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք:

Մինչև վերջերս հայ հասարակությունը գործնակա-  
նում գրեթե ոչինչ չգիտեր այն ազնվազարմ հայորդիների  
մասին, ովքեր իրենց անբասիր նկարագիրը ստեղծեցին  
հայ և համաշխարհային հետախուզության պատմության  
անդաստանում՝ դրանով իսկ փառքի արժանացնելով հայ  
ժողովրդին, բարձր պահելով հայրենիքի պատիվն ու արժա-  
նապատվությունը:

Եվ այսօր հրապարակ են գալիս գրքեր, նկարահան-  
վում են ֆիլմեր, որոնցում իրենց ողջ լուսապսակով վեր են  
հառնում այն հայ հետախույզների անչափ հետաքրքիր ու  
բազմաշերտ կերպարները, որոնք իրենց բանիմացությամբ,

տքնաջան և արգասաբեր աշխատանքի արդյունքում միանգամայն մնալուն տեղ գրավեցին հետախուզության տարեգրությունում:

Մեր կարծիքով, հենց այդ կարևորագույն հանգամանքները պայմանավորեցին, որ ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի կողմից պատրաստված փաստավավերագրական գրքում մեկ ամբողջության մեջ ներկայացվեն ոչ միայն առանձին հայ հետախույզների՝ նախկինում լայն հասարակությանն անհայտ դիմապատկերները, այլև հայկական պետականության ծնունդով պայմանավորված՝ նրա հետախուզական ծառայության ծնունդը, հետախուզական ավանդույթների ձևավորումը հայ իրականության մեջ: Հետախուզական և հակահետախուզական կառույցների կառուցվածքային միասնությունը, որի իրագործումը մենք փաստացիորեն տեսնում ենք Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեությունում, ցայտուն դրսևորվեց Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի ստեղծման մեջ **1919 թ. ապրիլին**: Այն ղեկավարվում էր մեկ միասնական կենտրոնից և գործում էր ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբին առընթեր: 1919-1920 թթ. նրա աշխատակիցների գլխավոր նպատակադրումն էր արժեքավոր և նպատակային տեղեկություններ ձեռք բերել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ձեռնարկվող նախապատրաստությունների և գործողությունների

րի, հայկական սահմանի ողջ երկայնքով ադրբեջանաթուրքական գորքերի տեղաշարժի ու դասավորության մասին և, ըստ այդմ, ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ քայլեր ու միջոցառումներ:

Հետագոտական պրպտումների արդյունքում, այսօր հնարավորություն է ստեղծվել հրապարակավ ներկայացնելու հայ հետախույզների ընտրանուն՝ կապիտաններ *S. Թ. Դևոյանցին, Վ. Գ. Մուրադյանին, զեներալ Հ. Ա. Քիչմիշյանին, հակահետախույզ Արտեմի Հովհաննիսյանին (Հովհան Խան-Կոտուրսկուն)* և այլ նվիրյալների, որոնք անմնացորդ նվիրվեցին Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի կարևորագույն օղակներից մեկի՝ հայկական հատուկ ծառայության ձևավորմանը:

Անհայտ այս հերոսների կյանքի ամեն մի դրվագը դիտարժան է և արժանի իր տեղը զբաղեցնելու հանրագիտարաններում և շտեմարաններում՝ դառնալով հայրենասիրական ոգով դաստիարակության և սեփական երկրի ու պետականության վեհ գափարներին անսահման նվիրվածության դասական օրինակ:

Վերջին հաշվով, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի կողմից հրատարակված այս աշխատությունը զգալի ավանդ է հայկական հետախուզության պատմության բնագավառում, թարմ խոսք, որի կարիքը մշտապես զգացվում

էր: Այն մի հաջողված և ուսանելի հետադարձ հայացք է դեպի պատմության խորքային ծալքերը, որոնցում հայ հետախույզներն իրենց նվիրաբերել են հայկական պետականության կայացման գործընթացներին: Միանգամայն ողջունելի է այս գրքի մուտքը ուսումնագիտական մասնագիտական հաստատությունների գրադարան՝ կարևոր հիմք հանդիսանալով հայկական պետության կայացման ու զարգացման գործառույթներին նրանց սաների նվիրվածության և վեհաշուք հայրենասիրության ոգով դաստիարակության գործում:

Ամեն մի երկիր իր պատվի խնդիրն է համարում անդրադառնալ այդ հայտնի և անհայտ հերոսների կերպարներին՝ հրապարակելով բազմաթիվ հատորներ՝ նվիրված հետախույզների կյանքի և գործունեության տարաբնույթ էջերի լուսաբանմանը: Այս առումով ներկայացվող գիրքը գալիս է որոշակիորեն հարստացնելու հայ հետախույզության պատմությանը նվիրված գրադարանը, ավելի խորացնելով հետախույզագիտության և, մասնավորապես, հայկական հետախույզության տարեգրության հետազոտության բնագավառում պրպտումները, ըստ այդմ ավելի լիարժեք հնարավորություն տալով ներկայացնելու հայ հետախույզների բացառիկ ավանդը համաշխարհային հետախույզության պատմությունում և համամարդկային արժեքների համար մղված պայքարում: Այն թարմ խոսք է հայկական

հետախույզական ծառայության ձևավորման և զարգացման ընթացքը համահավաք ամբողջության մեջ դիտարկելու գործում:

Գիրքը ինքնատիպ վերադարձ է հանիրավի մոռացված և անհայտ հերոսների՝ հայ հետախույզների կերպարներին, որոնց հետնորդները, բարձր գիտակցությամբ և հայ մարդուն հատուկ բարձր մասնագիտական հատկանիշներով զինված, շարունակում են իրենց նախորդների՝ լեգենդար հայ հետախույզների և շատ այլ անհայտ նվիրյալների գործը՝ զարգացնելով ու կատարելագործելով հետախույզական և հակահետախույզական այն կառույցների աշխատանքն ու գործունեությունը, որոնք հայկական պետականության նորօրյա հիմնաքարն են՝ հայոց նորօրյա պետականության «աչքն ու ականջը», նրա վեհության վերականգնման գրավականը և նրա բազում չլուծված հիմնախնդիրների լուծման բանալին:

Գիրքը կարդացվում է մի շնչով և կարող է լինել լավագույն նվերը հետախույզական գործի նվիրյալներին:

Մաղթում են հետագա ստեղծագործական հաջողություններ:

Պատմական գիտությունների դոկտոր  
պրոֆեսոր Վանիկ Հրանտի Վիրաբյան

*19 հունվարի, 2015 թ.*

Կեանքն ազգին եւ հայրենիքին  
պատարագելու չափ մեծ  
երջանկութիւն չկայ աշխարհում:

Գարեգին Նժդեհ

Նվիրվում է Հայաստանի  
Առաջին Հանրապետության  
հետախուզության և  
հակահետախուզության  
աջխատակիցների  
հիշատակին

## ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Պետական անվտանգության համակարգի, հատկապես դրա առանցքային բաղադրիչների՝ հետախուզության և հակահետախուզության ձևավորումն այն բարդագույն խնդիրներից է, որը թերևս ոչ բոլոր ազգերին է հաջողվել լուծել, իսկ անվտանգության համակարգի ստեղծումը պատմական այնպիսի կարճ ժամանակահատվածում, ինչպիսին 2 տարին է, որն ավելի ճիշտ կլիներ բնորոշել որպես պատմական ակնթարթ, ուղղակի անհրապական է թվում: Բայց, որքան էլ զարմանալի է, Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությանը հաջողվել է կառուցել այդպիսի մարմիններ, ավելին՝ ժամանակի թելադրանքով դրանք եղել են, առանց չափազանցության, տարածաշրջանի ամենաարդյունավետ գործող ծառայություններից, քանի որ, ինչպես պատմական փաստերն են ցույց տալիս, պատվով են իրականացրել իրենց առջև դրված ամենակարևոր խնդիրը՝ հայթայթել ու ժամանակին պետության ղեկավարությանը տրամադրել երկրի ներքին ու արտաքին իրադրության, հատկապես ռազմաքաղաքական իրավիճակի, ժողովրդի և պետության անվտանգությանն առնչվող փաստերի և գործընթացների մասին անհրաժեշտ տեղեկություններ: Սակայն ամենացնցողն այն է, որ այդ ծանրագույն գործն իրականացվել է ընդամենը մի քանի տասնյակ սպաների հերոսական աշխատանքի շնորհիվ:

Ամեն ժողովուրդ պատմության բեկումնային պահերին ծնում է իր հերոսներին, նրանց մղում սխրանքի, այդ սխրանքի գնով ապահովում իր հարատևությունը և հավերժացնում նրանց անունները՝ որպես փարոս գալիք սերունդների համար: Նրանց բոլորը գիտեն, և այդ առումով նրանք երջանիկ, հայտնի հերոսներ են: Բայց կան հերոսներ, ովքեր նման են հեռավոր աստղերի: Նրանց լույսը տեսնում ենք միայն շատ տարիներ, ավելին՝ տասնամյակներ անց: Այդպիսին են հայկական հետախուզության և հակահետախուզության ստեղծման ու զարգացման ակունքներում կանգնած սպաները, ովքեր իրենց կյանքը, առողջությունը, ուժն ու եռանդն ի սպաս դրեցին այդ վեհ, բարդագույն պետականաստեղծ գործին:

Հայկական առաջին հատուկ ծառայությունները որպես հանրապետական պետական կառավարման համակարգի ինքնուրույն մասնագիտական կառույց կազմավորվել են դեռևս 1918 թվականին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ծննդյան օրերին, կյանքի հրամայականով, ռազմաքաղաքական բարդագույն իրադրության մեջ, երբ Սարդարապատի հերոսամարտի կրակներից բարձրացած նորածին հանրապետության ամեն օրը կենաց-մահու կռիվ էր սովի և համաճարակի, քաոսի և անիշխանության դեմ՝ տասնյակ հազարավոր գաղթականների, ֆինանսատնտեսական, կադրային և նյութատեխնիկական աղետալի պայմաններում:

# ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՆԻՆԴԸ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

*Ով պատերազմում է հանուն մարդասիրության, նա  
կհաղթի թշնամիներին:*

Լաո Յզի

*Պատերազմը բարբարոսություն է, երբ հարձակ-  
վում են խաղաղ հարևանի վրա, բայց այն սուրբ  
պարտք է, երբ պաշտպանում ես հայրենիքդ:*

Գի դը Մոպասան

*Քանակով ամենամեծ բանակները միշտ չէ, որ  
ամենաուժեղն են:*


Էմիլ դը Շերարդեն




Սարդարապատի հուշահամալիրը, կառուցվել է 1968-78թթ.:  
Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան

Երկարատև դադարից հետո հայոց պետականության վերականգնումը 1918 թ. մայիսյան հերոսամարտերում մեր հինավուրց ազգի ազատասեր ոգու վերածննդի մարմնավորումը հանդիսացավ: Հայոց պատմության մեջ մայիսը համազգային մաքառման ու փառահեղ հաղթանակների ամիս է: Ճակատագրի քմահաճությամբ մայիսյան երեք գոյամարտերն էլ՝ Ավարայր, Սարդարապատ, Շուշի, իրենց պատմական նշանակությամբ բախտորոշ են դարձել մեր ժողովրդի համար:

1918 թ. հաղթական մայիսը նշանավորվեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերով, որոնք հարստացրին մեր պատմության ռազմական տարեգրությունը նոր անուններով ու սխրանքներով և ավելի



Սարդարապատի ճակատամարտի սխեման՝  
հեղինակությամբ Հ. Կոջոյանի




Սարդարապատի ամրոցի ավերակները

քան 600-ամյա ընդմիջումից հետո ծնունդ տվեցին հայկական պետականությանը: Սարդարապատը մեր ժողովրդի համազգային հաղթանակի խորհրդանիշն է, հայ զինվորի անպարտելի ոգու ու հաղթական բազկի ապացույցը, հայ ազգի ազատ լինելու իրավունքի ամրագրումը:

Անդրկովկասի ժողովուրդներից հայությունը միակն էր, որն իր անկախությունը ստացավ ոչ թե ի հաշիվ գերմանական հովանավորության կամ թուրքական նվիրատվության, ինչպես տեղի ունեցավ Վրաստանի և Ադրբեջանի պարագայում, այլ շնորհիվ ռազմի դաշտում թափված արյան<sup>1</sup>:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, մասնավորապես ռուսական հզոր կայսրության փլուզումը, անհետևանք չանցան Հայաստանի համար: Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատը ռուս-թուրքականից վերափոխվեց թուրք-անդրկովկասյանի, ապա վերաճեց հայ-թուրքականի: Դակատային գծի կազմալուծված իրավիճակը շտկելու համար օրակարգային դարձավ ազգային գորամիավորումների շուտափույթ կազմավորումը և ռազմաճակատը լքած ռուսական զորամասերի փոխարինումը: 1917 թ. վերջին սկսվեց Հայկական բանակային կորպուսի կազմավորումը, որի հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը:

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն. Խմբագրությամբ Հ. Միմոնյանի, Երևան, 2012, էջ 521:



Երևանի Հայոց ազգային ու զինվորական խորհուրդների հատուկ կոմիտեի կողմից զինվորներին (1918 թ. մայիս)

Հայոց ազգային խորհուրդը կոչ հղեց հայ ժողովրդին. «Այս պատմական օրերին մեզ վիճակվում է մի համազգային առաքելություն: Ծանր է այս առաքելությունը, թերևս վեր է մեր թույլ ուժերից, բայց անխուսափելի է: Ազգային խորհուրդը կոչ է անում համայն հայությանը՝ ուժերը լարված գործի անցնելու: Այս օրհասական վայրկյանին ամեն հայ, որ խուսափում է իր քաղաքացիական և ազգային պարտքը կատարել, հայրենիքի դավաճան է և իբրև դասալիք՝ արժանի է խստագույն պատժի»:

Օգտվելով ռազմաճակատում նման իրավիճակից՝ թուրքական զորքերը, 1918 թ. փետրվարին, խախտելով Եր-

զնկայում կնքված զինադադարի պայմանագիրը, անցան հարձակման՝ նպատակ ունենալով գրավել ոչ միայն Առաջին աշխարհամարտի ընթացքում ռուսական զորքերի կողմից նվաճված Արևմտյան Հայաստանի նահանգները, այլև Արևելյան Հայաստանը: Թուրքերին հաջողվեց գրավել Էրզրում և Կարս բերդաքաղաքները և մայիսի 15-ին մտնել Ալեքսանդրապոլ (Գյումրի), որի գրավումը ճանապարհ բացեց դեպի Արարատյան դաշտ:



5-րդ գնդի սպաները հաղթական մարտից հետո (1918թ. մայիս)

Հայաստանը հայտնվեց թուրքական արքանի մեջ: Համատարած հուսալքության պայմաններում, բարեբախտաբար, ոչ բոլորն էին համակված խուճապային ու պարտվողական տրամադրությամբ: Երկրամասի պաշտպանու-



Հրամկազմը հաղթանակից հետո

րյան գործը ստանձնեց Երևանի նահանգի ղեկավար («դիկտատոր») Արամ Մանուկյանը: Վերջինիս հրահանգով երեվանյան (Մարդարապատի) ուղղության հրամանատար նշանակվեց Հայկական կորպուսի Երևանյան դիվիզիայի հրամանատար, ռուսական բանակի զեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, Ղարաքիլիսայի ուղղությունը ղեկավարելու էր Հայկական կորպուսի հրամանատար, ռուսական բանա-



Սաքիլարի մարտկոցը (1918թ. մայիս)

կի գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը, իսկ Բաշ-Ապարանի մոտ ձե-վավորված ռազմա-ճակատի հրամա-նատար նշանակվեց Հայկական կորպու-սի ռազմական կոմի-սար Դրաստամատ Կանայանը (Դրո):



5-րդ գնդի զինվորներ (1918թ. մայիս)

Այս օրհասա-կան պահին հասա-րակության բոլոր գործուն ուժերը, մը-տավորականությունը, կուսակցությունները, հոգևորակա-նությունը մասնակից դարձան համազգային պայքարին: Սկսվեց աշխարհագորայինների հավաքագրումը, հարյու-րավոր մարդիկ, անկախ կուսակցական պատկանելությու-նից, մասնագիտությունից, քաղաքական համոզմունքից ու տարիքից, ներկայանում էին զորամասեր և կամավոր մեկ-նում ճակատ:

Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը վկայում է. «Արարատյան

դաշտի ժողովուրդը մի մարդու պես ոտքի է կանգնում: Գոր-ծում են ամենքը: Ազգային խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը: Հրամանատարությունը կարգավորում ու բարձրացնում է զորքի մարտական ուժը: Ջոր. Սիլիկյանը մի շարք հրա-մաններով ու կոչերով խրախույս է ներշնչում զինվորներին ու հասարակությանը: Ամենքը լծվում են թիկունքային աշ-խատանքի: Կանայք, օրիորդները ուտելիք, ծխախոտ, վի-րակապեր են պատրաստում: Հոգևորականությունը խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու զորքի մեջ: Գարեգին եպ. Հովսեփյանը շրջում է մի մասից մյուսը և իր հրաշունչ ճա-ռերով բարձրացնում է զորքի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանանց պատմական օրերը...»<sup>2</sup>:

Մայիսի 20-ին թուրքական զորքերը ներխուժեցին Ա-րարատյան դաշտ և գրավեցին Արաքս և Ղարաբուրուն կա-յարանները, իսկ հաջորդ օրը՝ մայիսի 21-ին, գրավեցին Սարդարապատ կայարանը և համանուն գյուղը: Թշնամին սպառնում էր գրավել Էջմիածինը, ապա Երևանը և, միա-վորվելով Բաշ-Ապարանի ուղղությամբ շարժվող 9-րդ դիվի-զիայի հետ, առաջանալ Սևան-Դիլիջան-Ղազախ ուղղու-թյամբ:

Այլևս նահանջի տեղ չկար. միայն հրաշքը կարող էր վրկել հայ ժողովրդին, և այդ հրաշքը կատարվեց...

<sup>2</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 145:

Մայիսի 22-ի վաղ առավոտյան, եկեղեցու զանգերի ղողանջների ներքո սկսվեց Սարդարապատի պատմական ճակատամարտը: Սարդարապատի զորաջոկատը, որի հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրավված Սարդարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչև Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը ջախջախվեց և նահանջեց դեպի Ալեքսանդրապոլ:

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի և ամբողջ ժողովրդի ոգին: Մեծացավ զինվորագրվողների քանակը, հերոսամարտը ստացավ համաժողովրդական բնույթ, հայ ժողովուր-



Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների խմբանկար (1918թ. մայիս)


ըր համախմբվել, մի բռունցք էր դարձել, որովհետև յուրաքանչյուր հայ գիտակցում էր, որ ինքը մարտնչում է հանուն հայրենիքի, հանուն կյանքի ու ազգային արժանապատվության:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցել են Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, ապագա մարշալ Հ. Բաղդամյանը, ապագա գեներալներ Ա. Վարդանյանը, Գ. Չալախյանը, գրող Ա. Բակունցը, հայագետներ Ա. Ղարիբյանը, Գ. Ղափանցյանը, բազմաթիվ այլ մտավորականներ ու սպազայում շատ բնագավառներում հայտնի դարձած, մեծ անուն վաստակած անձինք, ովքեր հերոսամարտի օրերին զինվորագրվեցին հայ ժողովրդի փրկության սուրբ գործին:

Սարդարապատի ճակատամարտին գրեթե զուգընթաց ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում ու Ղարսիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց Բաշ-Ապարանի ուղղությամբ՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից:

Իմանալով այդ մասին՝ հայկական զինված ուժերի կազմից առանձնացվեց հարվածային խումբ, որը Դրաստամատ Կանայանի (Դրոյի) ղեկավարությամբ ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջխաղացումը, այլև խիզախ հակազորոհով փախուստի մատնեց թշնամուն:

Մայիսի 24-28-ը ասեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ, որտեղ նույնպես հայկական զինուժը, հիրավի, ցույց տվեց հերոսական դիմադրություն: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան Գ. Նժդեհը, Ա. Բեյ-Մամիկոնյանը,



Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակագիրը (1918թ. մայիսի 30)

Ն. Ղորղանյանը և ուրիշներ:

Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ՝ վիժեցնելով Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու քուրքական ծրագիրը: Սա ողջ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակի արգասիքն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ, ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը դարձան հայոց նոր ժամանակների Ավարայրը, և իրենց դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից են:

Այս ճակատամարտերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանն ու սկսվում նորագույն՝ հայկական պետականության պատմության ժամանակաշրջանը: 1918թ. մայիսի 28-ին, մայիսյան հերոսամարտերից՝ Մարդարապատից, Բաշ-Ապարանից, Ղարաքիլիսայից հետո ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, վերածնվեց հայոց բաղձալի պետականությունը:

**ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

*Պետության ծագումը նաև արդարության ծագումն է:*

Պլատոն

*Ժողովրդի էությունը դրսևորվում է միայն  
ճակատագրական պահերին, երբ անհատները  
դառնում են միական ու միասիրտ, այլ խոսքով՝  
դրսևորվում է հոգու միասնություն:*

Գ. Նժդեհ

*Դաժան մարտերից հետո սովորաբար տեղատա-  
րափ անձրևներ են գալիս:*

Պլուտարքոս

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն ընդունեց հռչակագիր, որում մասնավորապես ասված էր. *«Անդրկովկասի քաղաքական ամբողջական լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»:*


Հունիսի սկզբին հրապարակվեց հաղորդագրություն. *«Հայոց ազգային խորհուրդը, այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, մայիսի 28-ին որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայաստանի Ժողովրդավարական Հանրապետություն»:*



ՀՀ խորհրդարանի շենքը

«Ցնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի համար նա նկատվում էր անժամանակ ծնունդ: ...ոմանք չէին հավատում նրան. անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ: Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին գորավոր, իրոք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախությունն այդ պայմաններում թվում էր հեզմանք», - գրել է Առաջին Հանրապետության վարչապետներից Սիմոն Վրացյանը<sup>3</sup>:

### Հայաստանի Առաջին Հանրապետության անդրանիկ կառավարության կազմը



Հովհաննես Քաջազմունի




Ալեքսանդր Խատիսյան

<sup>3</sup>Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 184:




Խաչատուր Կարճիկյան



Արամ Մանուկյան



Հովհաննես Հախվերդյան



Հայոց Ազգային խորհրդի հայտարարությունը կառավարության կազմի վերաբերյալ, 1918թ. հուլիսի 24



ՀՀ կառավարության շենքը




ՀՀ անկախության տարեդարձի առիթով Աստաֆյան փողոցում կառուցված հաղթակամարը, 1919 թ. մայիսի 28

Հիրավի, անբարենպաստ աշխարհաքաղաքական ու դժվարագույն ռազմական կացությունը հարցականի տակ էր դրել նորահռչակ հանրապետության կենսունակությունը, քանի որ ոչ միայն նեղ էին նրա սահմանները, այլև կյանքի անբաժան ուղեկիցներն էին սովը, համաճարակը, երբեմն քառսն ու անիշխանությունը: Հայկական պետականության կերտման գործում ներքին ու արտաքին բարդ խնդիրների լուծման համար պահանջվում էին գերմարդկային ճիգեր: Վիթխարի դժվարությունները հաղթահարելու ճանապարհին հայությունն ապրեց նոր մաքառումների, քաղաքական վայրիվերումների, հույսերի ու սպասելիքների ու, ցավոք, դառը հիասթափությունների մի հակասական շրջան:

Ու, չնայած այդ ամենին, անիրական թվացող պատմական կարճ ժամանակաշրջանում Հայաստանը դարձավ փոքրիշատե կազմակերպված հանրապետություն՝ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշներով՝ ինքնիշխանությամբ, օրենսդիր ու գործադիր մարմիններով, տնտեսական-քաղաքական համակարգով, ազգային բանակով, հետախուզությամբ և հակահետախուզությամբ, ներքին գործերի մարմիններով, դիվանագիտական կապերով, պետականության այլ խորհրդանիշերով:


Պետական կառավարման ձևի և ռեժիմի տեսակետից Հայաստանը որդեգրեց ժողովրդավարական (դեմոկրատական) հանրապետության կառուցման ուղին՝ խորհրդարանի գերակայությամբ:



ՀՀ անկախության տարեդարձի առիթով կազմակերպված տոնական շքերթ Երևանում, 1919թ. մայիսի 28

1918 թվականի հուլիսի 19-ին Թիֆլիսի ու Երևանի հայոց ազգային խորհուրդների համաձայնությամբ կազմվեց Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակավոր բարձրագույն օրենսդիր իշխանությունը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը), որի կազմում ընդգրկվեցին տարբեր կուսակցությունների, ազգային խորհուրդների անկուսակցական և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ ընդհանուր առմամբ 46 մարդ:

Հուլիսի 24-ին հրապարակվեց ՀՀ գործադիր բարձրա-




ՀՀ վարչապետի աշխատասենյակը

գույն իշխանության՝ Կառավարության կազմը. վարչապետ՝ **Հովհաննես Քաջազնունի**, ներքին գործերի նախարար՝ **Արամ Մանուկյան**, զինվորական նախարար՝ **Հովհաննես Հախվերդյան**, արտաքին գործերի նախարար՝ **Ալեքսանդր Խատիսյան**, ֆինանսների նախարար՝ **Խաչատուր Կարճիկյան**:

ՀՀ տարածքը հռչակման պահին 12000 ք.կմ էր, բնակչությունը՝ 700.000 մարդ: 1919-ին՝ համապատասխանաբար՝ 60.000 և 961.700:

Օգոստոսի 1-ին Հայաստանի խորհուրդը Երևանում գումարեց իր անդրանիկ նիստը՝ Ավետիք Սահակյանի նախագահությամբ: Նիստը որոշում ընդունեց գործուն քայլեր ձեռնարկել երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար:

1918 թ. Հայաստանը դիվանագիտական, ռազմական ու տնտեսական մեկուսացման մեջ էր: Բացի Իրանից, մնացած բոլոր հարևանների հետ կային վիճելի տարածքային հարցեր: Լոռու գավառի շուրջ ծագած տարածայնություններն անգամ հանգեցրին հայ-վրացական կարճատև պատերազմի, որի արդյունքում Լոռին հայտարարվեց չեզոք գոտի՝ անգլիական գեներալ-նահանգապետի իշխանության ներքո: Աղբբեջանը հավակնություններ ուներ Չանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի նկատմամբ:



ՀՀ անձնագիր, 1920 թ.

1919 թ. փետրվարին Երևանում տեղի ունեցավ Արևմտահայության 2-րդ համագումարը, որտեղ որոշում ընդունվեց Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակման մասին, իսկ անկախության տարեդարձի օրը՝ մայիսի 28-ին, Կառավարությունը Հայաստանը հռչակեց Անկախ և Միացյալ

Հանրապետություն, դրանով, փաստորեն, իրեն համարելով նաև Արևմտյան Հայաստանի իշխանության կրող:

1919 թ. հունիսին տեղի ունեցան ընտրություններ՝ 366 հազար ընտրողների և 7 կուսակցությունների մասնակցությամբ: 80 անդամից բաղկացած խորհրդարանի առաջին նիստը կայացավ օգոստոսի 1-ին, նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը:

Գործուն քայլեր ձեռնարկվեցին երկրի ներքին կյանքը կայունացնելու ուղղությամբ, սխյուռքահայ մի շարք մեծահարուստներ միջոցներ հատկացրին Հայաստանին, օգնություն ստացվեց ԱՄՆ-ից:

Լուսավորության նախարար Նիկոլ Աղբալյանի ջանքերով 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հանդիսավոր բացվեց պետական համալսարանը, որը խոշոր իրադարձություն էր երկրի գիտական, կրթական և մշակութային կյանքում:

Հանրապետության ներքին կայունությունը խարխալում էին բուրք-բաթարական խռովությունները, որոնք ճնշելու համար իշխանություններն ստիպված էին դիմել զինված ուժերին: Երկրի համար ծանր հետևանքներ ունեցավ նաև թուրքիկների 1920 թ. մայիսյան ապստամբությունը:



ՀՀ քաղաքացիական վկայագիր, տրված ԱՄՆ-ում ՀՀ ղեկավարատան կողմից, 1920 թ.



Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցի շենքը, որտեղ սկզբում գործել է պետհամալսարանը, 1920 թ.



Երևանի ուսուցչական սեմինարիայի շենքը, ուր տեղափոխվեց պետական համալսարանը, 1920 թ.



Երևանյան տեսարաններ, 1918-1920 թթ.



1920 թվականից սկսվեց ՀՀ միջազգային ճանաչման նոր փուլը: Փարիզի վեհաժողովում Անտանտի երկրները դե ֆակտո ճանաչեցին Հայաստանի անկախությունը: Հայաստանում ներկայացուցչություններ բացեցին Վրաստանը, Ադրբեջանը, Իրանը, միջազգային տարբեր ընկերություններ:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում Անտանտի երկրները և Թուրքիան ստորագրեցին պայմանագիր, որի 88-93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Ցավոք, ստեղծված միջազգային նոր իրադրության պայմաններում պայմանագիրը կյանքի չկոչվեց, Թուրքիայում իշխանության եկած քեմալականները չճանաչեցին ո՛չ Սևրի պայմանագիրը, ո՛չ Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի կառավարությունը փորձում էր Ռուսաստանի հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ, որին ամեն կերպ խոչընդոտում էին քեմալականներն ու Խորհրդային Ադրբեջանը:



1920 թ. Կարմիր բանակը մտավ Արցախ, հունիսին՝ Ջանգեզուր, օգոստոսին՝ Նախիջևան: Օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը հավանություն էր տալիս այդ գավառների՝ իրեն հայ-ադրբեջանական վիճելի տարածքների, ռուսական ուժերի կողմից ժամանակավոր գրավմանը:

1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը՝ Կարս, Արդահան, Բարում քաղաքները ներառյալ:

1920 թ. սեպտեմբերի 28-ին քեմալական բանակը, առանց պատերազմ հայտարարելու, Քյազիմ Կարաբեքիրի գլխավորությամբ, հարձակվեց Հայաստանի վրա՝ իրենց տարածած հաղորդագրության մեջ ցինիկորեն Հայաստանին ներկայացնելով որպես նախահարձակ: Պատերազմը Հայաստանի համար անհաջող սկսվեց, երկրում հայտարարվեց ռազմական դրություն: Հայկական ուժերը սեպտեմբերի 29-ին թշնամուն հանձնեցին Սարիղամիշն ու Կաղվանը, իսկ հոկտեմբերի 30-ին թշնամին առանց դիմադրության գրավեց Կարսի բերդը: Նոյեմբերի 7-ին ընկավ նաև Ալեքսանդրապոլը, որից հետո հայկական կողմը ստիպված լինումեց թուրքերի առաջարկած զինադադարը:



ՀՀ տարեդարձի առթիվ թողարկված փոստային բացիկներ և նամականիշներ



Հայաստանի Առաջին Հանրապետության  
արժեթղթերը, 1920 թ.

Նոյեմբերի 29-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 11-րդ Կարմիր բանակի օգնությամբ Ադրբեյջանից մտավ Հայաստան և երկրում հայտարարեց խորհրդային իշխանություն:

Դեկտեմբերի 2-ին Երևանում ՀՀ և Ռուսաստանի խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ստորագրած համաձայնագրով Հայաստանը հռչակվեց խորհրդային հանրապետություն:

Այդպիսով՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը գոյություն ունեցավ երկուսուկես տարի: Հայտնվելով միջազգային հակասությունների բարդ հանգուցակետում, պարտվելով Թուրքիային, մշտապես ենթարկվելով խորհրդային Ռուսաստանի հեղափոխական իշխանությունների ճնշմանը, ընկղմվելով սովետաթուրքական խարդավանքների ճիրանների մեջ, զրկված լինելով Արևմուտքի օգնությունից՝ այն դադարեց գոյություն ունենալ:

**ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

*Չկա ավելի մեծ ողբերգություն, քան թերագնահատել հակառակորդին:*

Լաո Յզի

*Ժողովուրդների պատմությունն այլ քան չէ, քան իրենց գոյամարտերի, իրենց հաղթությունների և պարտությունների պատմությունը:*

Գ. Նժդեհ

*Հաղթանակելն ավելի հեշտ է, քան կառավարելը:*

Ժան-Ժակ Ռուսո

Հայոց բանակը դարեր ի վեր հայոց ինքնության պահպանն է եղել, ու անգամ պետականության բացակայության երկարատև ժամանակաշրջանում առանձին զինվորական խմբավորումներ զսպաշապիկի դեր են կատարել օտարի ագրեսիայի դեմ:

Պատահական չէր, որ դարեր շարունակ պետականություն երազած ժողովուրդը 1918 թ. ամենավճռորոշ պահին հայ ռազմիկի հուժկու հարվածով կարողացավ հավաստել իր ապրելու իրավունքը: Չևավորվեց պետություն, ու նորաստեղծ հանրապետության առջև ծառայած կենսական ու առաջնահերթ խնդիրների շարքում կարևորվեց բանակի կազմավորման հարցը:



Թովմաս Նազարբեկյան (1855-1931), Հայոց բանակի գլխավոր հրամանատար




Մովսես Սիլիկյան (1862-1937), հայկական հետևակային դիվիզիայի հրամանատար



Քրիստավոր Արարատյան



Ռուբեն Տեր-Մինասյան



Դրաստամատ Կանայան /Դրո/



Հովհաննես Հախաբերյան

### ՀՀ ռազմական նախարարները

Առաջին Հանրապետության բանակը ստեղծվեց անկարագրելի ծանր սոցիալ-տնտեսական ու բավականին բարդ ու հակասական աշխարհաքաղաքական պայմաններում: Նրա ձևավորման հիմքը կազմեցին Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական իշխանությունների նախաձեռնությամբ կազմավորված Հայկական կորպուսը և հայ կամավորական խմբերը: Կորպուսի հրամանատարն անվանի գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր:

Փարիզի վեհաժողովում հայկական պատվիրակության կողմից ներկայացված տեղեկանք բանակի թվակազմի վերաբերյալ, 1920 թ.

2

1°) EFFECTIFS DE L'ARMÉE ARMÉNIENNE EN TEMPS DE PAIX.

1°) Officiers	1515
Officiers d'Administration	509
Médecins	97
Vétérinaires	17
Soldats du front	24715
Soldats hors rangs	4795
Volontaires	4023
Ouvriers	311
Chevaux	7847

2°) EFFECTIFS DES ETATS-MAJORS DE BRIGADES D'INFANTERIE EN TEMPS DE PAIX

Officiers	32
Officiers d'Administration	12
Médecins	4
Vétérinaires	4
Soldats du front	452
Soldats hors rangs	116
Chevaux	84

3°) EFFECTIFS DE L'INFANTERIE EN TEMPS DE PAIX

Bataillons	29
Officiers	666
Officiers d'Administration	57
Médecins	31

(suite)

Soldats du front	15495
Soldats hors rangs	1359
Chevaux	2111

4°) EFFECTIFS DE LA MILICE EN TEMPS DE PAIX.

---

Bataillons	6
Officiers	115
Officiers d'Administration	15
Médecins	5
Soldats du front	1129
Soldats hors rangs	115
Chevaux	466

5°) EFFECTIFS DE CAVALERIE EN TEMPS DE PAIX.

---

Escadrons	17
Officiers	88
Officiers d'Administration	10
Médecins	3
Vétérinaires	2
Soldats du front	2344
Soldats hors rangs	268
Chevaux	2509

(suite)

6°) EFFECTIFS DE L'ARTILLERIE EN TEMPS DE PAIX.

---

Batteries	16
Bataillons	2
Officiers	139
Officiers d'Administration	25
Médecins	6
Vétérinaires	5
Soldats du front	2751
Soldats hors rangs	388
Chevaux	1435

7°) EFFECTIFS DES TRUPES DU SERVICE AUXILIAIRE EN TEMPS DE PAIX.

---

Bataillons	3
Compagnies	33
Sections	12
Officiers	233
Officiers d'Administration	21
Médecins	15
Vétérinaires	2
Soldats du front	4932
Soldats hors rangs	644
Chevaux	929

(Suite)

8°) EFFECTIFS DES UNITES TECHNIQUES EN TEMPS DE PAIX.

Ils comprennent des bataillon du genie, des sections d'aviation, des sections de radiotélégraphie, et des trains blindés.

9°) EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE DE L'ARTILLERIE DU MINISTRE DE LA GUERRE.

Il existe des entrepôts de munitions de guerre à Alexandropol, Erivan, Karaklis, Delijian, Novo-Bayazet.

Des ateliers pour réparation des fusils et des mitrailleuses XXXXXXXXXXXXX, et des ateliers d'artillerie à Alexandropol.

Des ateliers pour fabrication de cartouches à Erivan et Alexandropol.

10°) EFFECTIFS DES ETABLISSEMENTS DEPENDANT DU SERVICE SANITAIRE DU MINISTRE DE LA GUERRE.

Il existe des Hopitiaux à :

Erivan  
Alexandropol  
Kars  
Sarikamich.  
Kamerlu  
Igdir  
Delijan  
Djelal ogli.

Il existe également des pharmacies militaires, trains sanitaires et asiles pour convalescents.


*Copie conforme à l'original*  
*Le Secrétaire de l'Intendance*  
*W. P. P. P.*



ՀՀ բանակին դրամական օգնություն տրամադրելու դիմաց տրված ստացական, 1920 թ.

Կորպուսը բաղկացած էր երկու հրաձգային դիվիզիաներից, հեծելազորային, հետևակային բրիգադներից և մասնագիտացված այլ ստորաբաժանումներից: Մայիսյան հերոսամարտերին հենց Հայկական կորպուսն էր, որ Սարդարապատում վճռական հարված հասցրեց թուրքերին:

Սակայն Բաքումի պայմանագրի կնքումից հետո Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը կարող էր ունենալ ընդամենը մեկ դիվիզիա, որի հրամանատար նշանակվեց Սարդարապատի հերոսամարտի հրամանատար, գեներալ Մովսես Միլիկյանը: Դիվիզիայի զորայինների ընդհանուր թիվը հասնում էր 16 հազարի: Հայոց բանակի գլխավոր հրամանատարն էր (սպարապետը) գեներալ Թովմաս Նազարբեկյանը (1855-1931):



ՀՀ բանակի սպառազինության մեջ եղած գրահամերենա

Կազմալուծվեցին ՀՀ տարածքում գտնվող կամավոր հայրուկային խմբերը: 1919 թ. հունվարին, երբ թուրքական զորքը հեռացել էր Անդրկովկասից, և ավարտվել էր հայ-վրացական պատերազմը, կատարվեց բանակի մասնակի զորացրում: Դրա փոխարեն հայտարարվեց 20-25 տարեկան զինապարտ քաղաքացիների զորակոչ:

Մայիսյան հերոսամարտերից հետո հայկական զորքերի մեծ մասը հայտնվել էր անմխիթար վիճակում, հատկապես մատակարարման առումով, քանի որ բոլոր պահեստները մնացել էին թուրքերի ձեռքում, մի մասն էլ կենտրոնացել էր Թիֆլիսում, որտեղից զենք ու զինամթերքի առաքումը հետագայում հայ-վրացական պատերազմի

պատճառով ևս արգելափակվել էր վրացիների կողմից<sup>4</sup>:

1918 թ. հունիսի 15-ին սկսվեց Ռազմական նախարարության կազմավորումը, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվեց Գլխավոր շտաբը՝ իր գրասենյակային, տեսչական բաժիններով, շարային ու զորահավաքային բաժանմունքներով<sup>5</sup>:

Գլխավոր շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Արսենի Դոլուխանյանը:

ՀՀ առաջին ռազմական նախարար դարձավ գեներալ-լեյտենանտ **Հովհաննես Բարսեղի Հախվերդյանը** (1918 թ.



Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարարության շենքը

<sup>4</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Երևան, 2009, էջ 63-64:

<sup>5</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-276, ց.1, գ.79, ք. 44-45:

հուլիսի 6 – 1919 թ. մարտի 27), որից հետո կառույցը գլխավորեցին **Քրիստափոր Գերասիմի Արարատյանը** (1919 թ. մարտի 27 – 1920 թ. ապրիլի 2), **Ռուբեն Կարապետի Տեր-Մինասյանը** (1920 թ. ապրիլի 3 – 1920 թ. նոյեմբերի 2) և **Դրոն՝ Դրաստամատ Մարտիրոսի Կանայանը** (1920 թ. նոյեմբերի 24 - դեկտեմբերի 2):

Անվտանգության համակարգի ձևավորման ու բանակաշինության գործընթացների ճանապարհին կարևոր քայլ էր 1919 թ. մարտի 25-ին ՀՀ զինվորական նախարարությանն առընթեր Ռ-ազմական խորհրդի ստեղծումը, որը կոլեգիալ ձևով պետք է քննարկեր ռազմական-բանակային շինարարության և մարտական գործողությունների սկզբունքային հարցերը: Խորհրդի նախագահ նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը:

1918 թ. ամռանը հայկական բանակում ծառայում էր 17.000 զինվորական, այդ թվում՝ 900 սպա: Պետականության ամրապնդմանը զուգընթաց բանակի թվաքանակն աճեց, և արդեն 1919 թ. բանակում ծառայողների թիվը հասավ 30.000-ի, իսկ հանրապետության անկման պահին՝ 1920 թ. աշնանը՝ 40.000 զինվորականի, որոնցից 33-ը գեներալներ էին, իսկ 2000-ից ավելին՝ սպաներ:

1920 թ. հայկական բանակի թվակազմի վերաբերյալ քիչ թե շատ ամբողջական պատկերացում է տալիս Փարիզի վեհաժողովում ներկայացված ֆրանսալեզու փաստաթուղ-

թը, որի հեղինակը Փարիզում ՀՀ պատվիրակության քարտուղարի օգնական Ղազարյանն է: Փաստաթղթում հանգամանորեն թվարկված են բոլոր զորատեսակները, սպաների և զինվորների քանակը, կան տեղեկություններ ինժեներական գումարտակի, ավիացիոն դասակի, գրահագնացքների, ռազմամթերքի պահեստների, սանիտարական ծառայությունների և հոսպիտալների վերաբերյալ<sup>6</sup>: Ըստ այդ տվյալների՝ հայկական բանակի ճակատային զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715, սպաներինը՝ 1515, վարչական սպաներինը՝ 309, իսկ կամավորներինը՝ 4023 հոգու:

ՀՀ բանակի ձևավորման գործում մեծ դերակատարում ունեցան ռուսական ցարական բանակի նախկին սպաները, առանձին հայ կամավորականները: Հայոց բանակում ծառայում էին ավելի քան 20 նախկին ռուսական բանակի գեներալներ և տասնյակ բարձրաստիճան սպաներ:

Հայոց բանակի սպառազինությունը բավարար չէր և հիմնականում ձևավորվել էր ռուսական բանակի թողած զենք-զինամթերքի, ինչպես նաև արտասահմանում բնակվող հայերի նվիրատվությունների հաշվին: Հայտնի է, որ սպառազինություն էր ներկրվում նաև Մեծ Բրիտանիայից ու Հունաստանից:

<sup>6</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-200, ց.2, գ.160, ք. 1-5:



ՀՀ բանակի սպառազինության մեջ եղած ինքնաթիռ /աերոպլան/

Հայոց բանակն ուներ փոքր տորմիդ Սևանա լճում, որը բաղկացած էր «Աշոտ Երկաթ» ռազմաբեռնատար երկկայմ շարժիչավոր առագաստանավից՝ զինված 1 թնդանոթով, 2 գնդացրով և 1 լուսարձակով, «Գեղանուշ» շարժիչավոր միակայմ առագաստանավից, 1 թիանավից և մի քանի տասնյակ նավակներից:

Կարսը Հայաստանին վերադարձնելուց հետո (1919 թ. գարուն), այնտեղ ավարտվեցին հայկական ավիազոկատի ձևավորման աշխատանքները, կահավորվեցին պահեստները, անգարները և թռիչքադաշտը: Հայկական ավիազոկատի առկայության փաստն ուշագրավ է այն առումով, որ այդ ժամանակաշրջանում ողջ աշխարհը դեռ նոր էր քայլեր անում ռազմական օդուժ ստեղծելու ուղղությամբ: Ընդհա-

նոր առմամբ, հայկական օդուժը համալրված էր «Սալմոն», «Նյուպոր», «Ալբատրոս» և «Մորան» տիպի 12 ինքնաթիռներով, որոնց մեծ մասը կարիք ուներ վերանորոգման: Ավիազոկատն անգամ մասնակցել է հայ-վրացական պատերազմին և թշնամու վրա կատարել 30 ռմբանետում:

Արխիվային փաստաթղթերի վկայությամբ ռազմական նախարարը բանակցություններ է վարել՝ ֆրանսիացի հրահանգիչներ հրավիրելու և օդազնացության արվեստը յուրացնելու նպատակով մի խումբ հայ զինվորականների Ֆրանսիա գործուղելու համար:

Հայկական բանակի կայացման դժվարությունները հիմնականում պայմանավորված էին երկրի ծանր սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններով: Այդ հակա-



ՀՀ բանակի սպառազինության մեջ եղած քնդանոթներ

սական իրավիճակում կառավարությունը քաջ գիտակցում էր պետական անվտանգության համակարգի ձևավորման և պաշտպանունակության ամրապնդման, երկրի սահմանները ապահովագրելու կարևորությունը:



ԶՕՐԱՀԱՆՊԷՍ

(Աջ, սրով՝ Զօր. Ք. Արարատեանը)

ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Մ. Զինկևիչի՝ 1919թ. հունիսի 10-ի հրամանով հաստատվում է հայկական 1-ին Սահմանապահ բրիգադի հաստիքակազմը: Բացի բրիգադի հրամանատարից և նրա 3 օգնականներից, բրիգադն ուներ 3 բաժին և 6 ջոկատ:

1919 թ. դեկտեմբերի 19-ին Նախարարների խորհուրդը լսեց և հավանության արժանացրեց սահմանապահ գումարտակ կազմակերպելու համար հատկացումներ կատարելու վերաբերյալ ֆինանսների նախարարի զեկուցումը<sup>7</sup>:

Եվս մեկ ուշագրավ արխիվային փաստաթուղթ վկայում է, որ 1920թ. ապրիլի 10-ին ռազմական նախարար Ռ. Տեր-Սիմոնյանը կառավարությանը ներկայացրած զեկուցագրում նշել է, որ ՀՀ սահմաններից հաճախ անօրինական կերպով դուրս են բերվում հում նյութեր, թանկարժեք գույք և անասուններ: Իրադրությունը շտկելու նպատակով նա պահանջում էր վրացական սահմանի վրա՝ Քուռ գետի հովտով դեպի Արդահան՝ 1-ին սահմանային բրիգադի ուժերով սահմանել սահմանային գիծ<sup>8</sup>: Այս քայլը, անշուշտ, կարևոր էր պետական անվտանգության ապահովման տեսանկյունից և կառավարությունը որոշակի ջանքեր գործադրեց այդ ուղղությամբ:

Ամբողջացնելով սահմանապահ ուժերի ձևավորման գործընթացների համառոտ նկարագրությունը՝ վկայակոչենք ռազմական նախարար Ք. Արարատյանի ստորագրությամբ փաստաթուղթը (1920 թ. հուլիսի 27), որից պարզ է դառնում, որ ՀՀ զորքերի հրամանատարի շտաբին կից ձևավորվել էին՝ 1-ին սահմանապահ Ղարաքիլիսայի բրիգադը (տեղաբաշխման վայրը՝ Ղարաքիլիսա), 2-րդ սահմանապահ Կարսի

<sup>7</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-199, ց.1, գ.100, ք. 270:


<sup>8</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-199, ց.1, գ.118, մաս 3, ք. 181, 191:

բրիգադը (Կարս), Սահմանապահ զորքերի հրամանատարի շտաբին կից՝ Հատուկ սահմանապահ բաժանմունքը (Երևան) և Շարուրի զորաջոկատի սահմանապահ հատուկ բաժինը, որոնք կոչված էին ապահովելու պետական սահմանի անվտանգությունն արտաքին թշնամական ներթափանցումներից և արգելելու տարբեր արժեքների մաքսանենգ տեղափոխումը երկրից<sup>9</sup>:

Մշտական կանոնավոր զորքերի մեջ էին մտնում նաև տեխնիկական զորքերը, որոնց կազմում ընդգրկված էին ինժեներական գումարտակը, ռադիոհեռագրային դիվիզիոնը և Երևանի ռադիոկայանը:

Բացի մշտական զորքից, գործում էին միլիցիայի կամավորական պարտիզանական ստորաբաժանումները՝ Դարալազյազի, Գողթանի, Էջմիածնի, Կրբուլաղի գումարտակները:

## Տեղեկանք Հայաստանի ռազմական դրության մասին, 1919թ. սեպտեմբերի 20



<sup>9</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-202, ց.1, գ.141,թ. 8, գ.98, ք. 10-11:

27

и Загребской области и заглавие Загребской о том,  
 что они никогда не считали себя отдельной частью Австрий-  
 ской империи, как обобщенная ольсь сь какой-нибудь про-  
 дельственной частью подобно Нахичеванской провинции. Наряду сь а  
 эмиль Халиль-паша, находившийся в Нахичевани, в начале своего  
 владения владеть татарь, заявляя, что уже издавна есть дело, ко-  
 гда мухамедане всего мира и по численности Австрийских сь  
 Турция соединител. За последние два года Представителем Австр-  
 ийским Визирем в Константинополе в Бугу отразилось  
 около 100 сь турок-татарь. Икрайе Риза бей, состоявший при  
 турчане поинципалитетом: Бугу, по совету Турк-паша вновь за-  
 влечать в Австрийские для участия своего своего поста.

Всё это приводит к делу санджакхана о той же  
 радонной работь турок и татарь, которая в первую голову  
 принадлежит австрийскому Австрийскому праву, по которой австрий-  
 ская единственная провинция в области Турция сь Австр-  
 ийские чина, после чего иными наикомиссариатом пришло бы более  
 развиться форму и постепенно <sup>возникать</sup> ~~наступать~~ бы сь действительность.

Враць Начальника Императорского Каса  
 К а н к е н з /подпись/  
 В 6 р н о:  
 Делеприводителъ

Ջինվորական ուսումնական հաստատություններից էին Գլխավոր շտաբի սպայական դասընթացները և սպայական նախապատրաստական դպրոցը, որոնք տեղակայված էին Երևանում:

Բանակի ներքին ծառայության հարցերը կարգավորվում էին ռուսական ցարական բանակի կանոնադրության հիման վրա, կոչումներն ու աստիճանակարգերը ևս ներմուծված էին ռուսական բանակից: Հայոց բանակի հրամանատարությունն անշուշտ միջոցներ էր ձեռնարկում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որոնք, հասկանալի պատճառներով, չհասցրին իրականություն դառնալ: Օրինակ՝ ռազմական նախարար Ռ. Տեր-Սինասյանի՝ 1920 թ. հունիսի 26-ի շրջաբերականով մինչև օգոստոսի 1-ը հրամայվում էր բոլոր շտաբներում, գորամասերում և ռազմական հիմնարկներում գործավարությունը և գրագրությունը վարել հայերենով, ինչն այդ շրջանում այնքան էլ հեշտ ու իրական չէր՝ հաշվի առնելով ռուս մեծաթիվ զինվորականների առկայությունը և հայ սպայակազմի՝ հիմնականում ռուսական կրթությունը:

Այնուամենայնիվ, ռազմական նախարարությունը կարճ ժամանակում հսկայական աշխատանք կատարեց, որից առաջնայինը պետք է համարել «Ջինապարտության մասին» օրենքի ընդունումը, համաձայն որի՝ հայկական բանակում ծառայության ժամկետ սահմանվեց 18 տարին, որից 3-ը՝ գործող բանակում, մնացածը՝ պահեստագործում:

Հայաստանի արական բնակչության 16-43 տարեկան անձինք համարվում էին զինապարտ:

Հայաստանի ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները թեև օրենքով ենթակա չէին զորակոչման, սակայն նրանց թույլատրված էր կամավորական հիմունքներով ստեղծել ազգային ստորաբաժանումներ: Հայտնի է, որ «եզդիական գումարտակը» աչքի ընկնող մասնակցություն է ունեցել քեմալական արշավանքի դեմ մղված ինքնապաշտպանական մարտերում:

Հայկական բանակում առկա խնդիրներից ամենալուրջը թերևս դասալքությունն էր, որը բոլոր ժամանակներում էլ եղել է բանակը քայքայող ամենացավոտ երևույթը: Իհարկե, հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն էին, սակայն պակաս դեր չունեին նաև ներքին ու արտաքին քայքայիչ ուժերը՝ ի դեմս բոլշևիկների, որոնք լայնածավալ քարոզչություն էին իրականացնում բանակի կազմալուծման ուղղությամբ:

1920 թ. դրությամբ հայկական բանակում դասալիքների թիվը հասնում էր 18.000-ի: Կառավարությունը շատ խիստ միջոցների դիմեց այդ արատավոր երևույթը կանխելու ուղղությամբ՝ պատժելով (ընդհուպ մինչև գնդակահարություն) ոչ միայն դասալիքներին, այլև նրանց թաքցնողներին: Սակայն, ցավոք, անգամ ծայրահեղ միջոցները գոհացուցիչ արդյունքներ չտվեցին:

Այդ շրջանում պակաս արդիական չէր նաև զենքի ապօրինի շրջանառության և մատուցելու խնդիրը: Չկապրվել էին զինված խմբավորումներ, որոնք զբաղվում էին խաղաղ բնակչության թալանով: Դժվարությունն այն էր, որ ապօրինի զենք-զինամթերքը կենտրոնացած էր նախկին կամավորականների՝ ֆիդայիների ձեռքում: Ցավոք, խմբապետական մտայնություն ունեցող շատ զինվորական առաջնորդներ, չնայած իրենց ազգային-հերոսական նկարագրին և ազնիվ մղումներին, գործնականում անընդունակ էին ընկալելու կանոնավոր բանակում ծառայելու պահանջները և ներքին լուռ տարածայնություն ունեին բանակի սպայական կազմի հետ: Հաշվի առնելով նրանց անառարկելի հեղինակությունը բնակչության շրջանում՝ այս երևույթը, անշուշտ, չէր կարող դրական անդրադառնալ բանակաշինության գործընթացի վրա:

Չնայած թվարկված բարդություններին, հայկական բանակը կատարեց իր առջև դրված խնդիրները, մասնավորապես 1918 թ. դեկտեմբերին ազատագրեց Լոռին, 1919 թ. մտավ Կարսի մարզ և այն կցեց Հայաստանի Հանրապետությանը, 1920 թ. մայիսին արագորեն ճնշեց բոլշևիկյան ապստամբությունը:

1920 թ. հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի պարտությունն ուներ իր օբյեկտիվ պատճառները՝ քեմալական Թուրքիայի ավելի լավ սպառազինությունը,

ինչպես նաև այն հանգամանքը, որ Թուրքիայից բացի Հայաստանը փաստացի պատերազմական դրության մեջ էր Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի հետ և երեք ճակատով չէր կարող դիմակայել ճնշմանը:

Բանակում կարևոր խնդիրներից էին հետախուզական և հակահետախուզական աշխատանքների հետագա ծավալումը, կարգապահության ամրապնդումը: Այդ ուղղություններով ևս զգալի աշխատանքներ կատարվեցին: Սակայն ռազմաքաղաքական չթուլացող լարվածությունը, սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակը, ժամանակի սղությունը և մի շարք այլ անբարենպաստ հանգամանքներ հնարավորություն չտվեցին ավարտին հասցնել ազգային բանակի հզորացման գործընթացը:

**ՀԵՏԱՆՈՒՉՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱԿԱՀԵՏԱՆՈՒՉՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

*«Հետախուզութիւնը պետութեան աչքն ու ականջն է:  
...Հմուտ հետախոյզը իր գործելակերպի եւ գործունեութեան  
մեջ որեւէ սահման չունի, նա պետք է շարժուի պահանջի եւ  
պայմաններու համեմատ»:*

## Տիգրան Դեղյանց

Հայոց պատմության նորագույն շրջանի կարևորագույն էջերից է Հայաստանի Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի, մասնավորապես դրա առանցքային ինստիտուտների՝ հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ստեղծումը:

Երբեմն թյուր տեսակետ է արտահայտվում, թե Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում այդպես էլ չի հաջողվել վերջնականապես ձևավորել այդ կարևորագույն պետական կառույցները: Սակայն արխիվային նյութերը հիմք են տալիս եզրակացնելու, որ դժվարագույն աշխարհաքաղաքական և ռազմական կացության մեջ հռչակված պետության կառավարությունն իր առաջնակարգ խնդիրներից մեկն է համարել հատուկ ծառայությունների կազմակերպումը, որոնք է ուղիներ դրա պատշաճ կայացման ու զարգացման համար, ունեցել է հաջողություններ և, ինչ խոսք, նաև ցավալի սայթաքումներ:

1918-20 թվականների դժվարին պայմաններում այդ կարևոր կառույցը, ավելի ստույգ ստորաբաժանումը, չհասց-

րեց դառնալ լիովին ինքնուրույն ծառայություն, այլ գործեց որպես *Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունք*, որն իր գոյության երկուս ու կես տարիների ընթացքում ունեցել է 4 պետ՝

*գնդապետ Ալեքսանդր Շնեուր* (սկզբնավորման օրից մինչև 1919 թ. սեպտեմբեր).

*կապիտան Վահագն Մուրադյան* (1919թ. սեպտեմբեր – 1920 թ. ապրիլ)

*կապիտան Տիգրան Դևոյանց* (1920 թ. ապրիլ-հունիս)  
*պորպորուչիկ Միքայել Դորոխյան* (1920 թ. հուլիսից մինչև հանրապետության անկումը):

Հակահետախուզության գործերը վարել է *պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկին (Արտեմ Հովհաննիսյան)*:

Գլխավոր շտաբի կազմակերպման և Ռ-ազմական նախարարության ղեկավարման կանոնադրության մեջ (1919 թ. ապրիլի 14) ընդգծվում էր, որ Շտաբի կազմում գործող հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը զբաղվում է՝

- հակառակորդի և տեղանքի մասին տեղեկությունների հավաքմամբ.

- այդ տվյալների մշակմամբ, համակարգմամբ և դրանց՝ ղեկի գորքերը ժամանակին առաքմամբ.

- ղեկավարում է բրիգադների շտաբների հետախուզական աշխատանքները.

- հսկում է հետախուզության համար բաց բողմվող

Штат Генерального Штаба Военного Министерства

Наименование Отделения	Число чинов (всего)	Число офицеров	Примечание
Начальник Штаба (Генеральный Штаб) Генерал-Майор	1		
1. ОПЕРАТИВНОЕ ОТДЕЛЕНИЕ:			
Начальник Отделения (Генерального Штаба штаб-офицер)	1		
Помощник (Генерального Штаба Штаб- или обер-офицер)	1		
И И С А Р Е Й:			
Старших	3		
Младших	2		
2. РАЗВЕДЫВАТЕЛЬНОЕ ОТДЕЛЕНИЕ:			
Начальник Отделения (Генерального штаба штаб-офицер)	1		Организация по особому секретному плану *) Одни из них не дают пок.-разведки
Помощник (Штаб- или обер-офицер)	2 <sup>*)</sup>		
И И С А Р Е Й:			
Старших	1		
Младших	1		
3. ОБЩЕЕ ОТДЕЛЕНИЕ:			
Начальник Отделения (Ген. Штаба штаб-офицер)	1		
Помощник Штаб- или обер-офицер	1		
Чиновник журналист	1		
Офицер типограф	1		
Чертежник	2		
И И С А Р Е Й:			
Старших	3		
Младших	2		
Разсылных	3		
Всего в Управлении Генерального Штаба:			
Генералов, Штаб- и обер-офицеров	9		
Чиновников	3		
СОЛДАТЪ:			
Старших	7		
Младших	5		
Разсылных	3		
Всего солдат	15		

ПРИМЕЧАНИЕ: На случай выделения двух летучих оперативных штабов разрешается сверхъ указанного числа иметь в оперативном

ՀՀ ռազմական նախարարության Գլխավոր շտաբի հաստիքացուցակը

разработкой вопросов, касающихся строевого и тактического образования и воспитания войск и стремью к успешному его достижению, и) изысканием мѣръ къ достиженію физическаго развитія въ строевыхъ частяхъ, распространению искусства владѣнія оружіемъ и развитія военнаго спорта, к) разсмотрѣніемъ вопросовъ по устройству и снабженію войскъ, которые могутъ имѣть вліяніе на военное образованіе, л) составленіемъ издѣній, наставляющихъ наставленій положеній и инструкцій, касающихся образованія и воспитания войскъ, м) производствомъ занятій въ военно-учебныхъ заведеніяхъ войскъ, н) борьбой съ шпионажемъ, о) перенесеніемъ военно-политическаго характера, п) картографическимъ матеріаломъ, входящимся въ войскахъ, р) общими соображеніями по службѣ связи, с) организацией маневровъ и полевыхъ поѣздовъ, т) давая общія заданія по мобилизаціи войскъ, у) разработкой вопросовъ примѣненія новейшихъ техническихъ усовершенствованій, примѣняемыхъ на войнѣ.

5) Начальникъ Генеральнаго Штаба непосредственно руководитъ разработкой всѣхъ указанныхъ выше вопросовъ.

Генеральный Штабъ состоитъ изъ:

6) Оперативнаго Отдѣленія, которое вѣдаетъ отдѣлами, указанными въ п. и. а), б), в), г), р), с), т), ст. я и выполняетъ сообразно работѣ по ст. 2. Въ немъ сосредоточиваются: разработка соображеній и подготовка распоряженій по всѣмъ вопросамъ оперативнаго характера, содержаніе свѣдѣній о ходѣ военныхъ дѣйствій, о боевомъ составѣ арміи и степени обезпеченности по всѣмъ необходимымъ: храненіе и разъяска секретныхъ ключей, составленіе боевыхъ приказовъ, организация службы связи, веденіе журнала военныхъ дѣйствій.

7) Развѣдывательнаго Отдѣленія, которое вѣдаетъ сборомъ свѣдѣній о противникѣ и мѣстности, обработкой этихъ данныхъ и своевременная разъяска ихъ въ войска, руководитъ развѣдкой ведущей штабами бригадъ, ведетъ учетъ суммачкъ, отпускаемыхъ на развѣдку, организуетъ борьбу съ шпионажемъ.

8) Общаго Отдѣленія, которое вѣдаетъ отдѣлами, указанными въ п. г), м), о), ф), с), у), въ немъ сосредоточиваются: разработки соображеній о томъ, чтобы военныя уставы, и также наставленія и инструкціи были бы соответствовали современнымъ требованіямъ военного искусства и снабженія войскъ этими пособиями, разработка вопросовъ, касающихся внутренняго порядка, быта и дисциплины въ войскахъ и гарнизонной службы, руководитъ тактическими занятіями съ офицерами въ частяхъ, составляетъ для этого программы и инструкціи, производитъ поѣздки по указанію Командующаго войсками, разработка вопросовъ по подготовкѣ унтеръ-офицеровъ, организацией войсковыхъ школъ, учебныхъ заведеній, унтеръ-офицерскихъ школъ и всѣхъ военныхъ-учебныхъ заведеній, разработкой наилучшихъ методовъ для введенія въ нихъ занятій, разсмотрѣніе книгъ для обращенія ихъ въ войскахъ, организация въ войскахъ чтеній военнаго характера, сборъ и изданіе военно-историческаго матеріала, изданіе военнаго журнала, дѣлопроизводство и журнальная часть Генеральнаго Штаба.

Բաղվածք ՀՀ նախարարների խորհրդի որոշումից՝  
Ուսումնական նախարարության ֆինանսական հատկացումների  
մասին, 1918 թ.

դրամական միջոցների հաշվառումը.

- կազմակերպում պայքարը հակառակորդի ծավալած  
լրտեսական գործունեության դեմ:

Նույն փաստաթղթով հաստատվում էր նաև հետա-

խուզության և հակահետախուզության բաժանմունքի հաս-  
տիքակազմը՝ պետ, երկու օգնական, երկու գրագիր: Հավել-  
վածում նշվում էր, որ օպերատիվ անհրաժեշտության դեպ-  
քում հետախուզական, ինչպես նաև օպերատիվ և ընդհա-  
նուր բաժինները կարող էին ունենալ ևս երկուական օգնա-  
կան և գրագիր<sup>10</sup>:

Հայկական հետախուզության և հակահետախուզու-  
թյան աշխատանքը կազմակերպվում էր դասական պատկե-  
րացումներին համապատասխան՝ հաշվի առնելով ռազմա-  
քաղաքական իրավիճակի առանձնահատկությունները:

Ինչպես իր հուշերում գրում էր Տիգրան Դեղյանցը  
«Հետախուզութիւնը պետութեան աչքն ու սկանջն է: Հե-  
տախուզական բաժանմունքը խաղաղ ժամանակ կը պատ-  
րաստուի պատերազմի համար եւ անդադար կուտամնուասիրէ  
քընամիի ուժերու դասատրութիւնը, զօրաշարժի յատա-  
կագիծը, զօրքերու տեսակներն ու որակը, ամրութիւնները,  
հաղորդակցութեանց միջոցները, կապը, մքերքներն ու ռազ-  
մամքերքի պահեստները, բերքը, ժողովրդի տնտեսական ու  
առողջապահական վիճակը, անոր տրամադրութիւնը, ազ-  
գութիւններու փոխյարաբերութիւնը, պահեստի զօրամասե-  
րը, հրամանատարներու բնատրութիւնը, գետերու խորութի-  
ւնը տարւա չորս եղանակներուն, անցնելիք տեղերը, նոր  
շինող ճանապարհները, օդակայանները եւ այլն, եւ այլն:

<sup>10</sup> ՀԱԱ, Ֆ.Պ. – 204, ց.1, գ.132, ք. 52-55:

Հետախուզական բաժանմունքին կը վերաբերի նաև աշխատիլ փչացնել թշնամիի հաղորդակցութեանց միջոցները, պայթեցնել ռազմամթերքի պահեստները, այրել պաշարները, հիւանդութիւններ տարածել մանրէներու միջոցաւ, ասպտամբութիւններ, ներքին խռովութիւններ առաջ բերել թշնամիի երկրի ներսը, կապվիլ անոնց հեռախօսի եւ հեռագրի թելերու հետ, բանալ ծածկագիր հեռագիրները: Մի խօսքով, հմուտ հետախոյզը իր գործելակերպի եւ գործունեութեան մեջ որեւէ սահման չունի, նա պետք է շարժի պահանջի եւ պայմաններու համեմատ»:

Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները կայացան գրեթե ոչնչից, կարճատև պատմական ժամանակաշրջանում և անհաղթահարելի թվացող ֆինանսատնտեսական ու կադրային-տեխնիկական դժվարությունների պայմաններում:

Արխիվային տվյալները վկայում են, որ ՀՀ կառավարությունը, հանրապետության հռչակումից անմիջապես անց, փորձել է իր շատ համեստ բյուջեից գումարներ հատկացնել այդ գործի կազմակերպման համար:

1918 թ. օգոստոսի 13-ին Նախարարների խորհրդի նիստում լսվել է ռազմական նախարարության միջնորդությունը՝ գումարներ հատկացնելու ավիացիայի, հետախուզության և ռադիոհեռագրերի վրա կատարված ծախսերը ծածկելու համար: Քննարկելով հարցը՝ որոշում է կայաց-

վում կառավարության վարկի հաշվին բաց թողնել 6 միլիոն ռուբլի, որից՝ ա/ չնախատեսված ծախսերի համար հատկացնել 20 հազար ռուբլի, բ/ հետախուզության համար՝ 20 հազար ռուբլի, գ/ հակահետախուզության համար՝ 20 հազար ռուբլի<sup>11</sup>:

Հանրապետության կառավարող մարմինները մշտապես ուշադրության կենտրոնում են պահել պետական անվտանգության համակարգի տարբեր օղակների, այդ թվում՝ հետախուզական և հակահետախուզական ծառայության կազմակերպման հարցերը, հնարավորինս փորձել են ավելացնել ֆինանսական հատկացումներն այդ ոլորտում: Եվս մեկ արխիվային փաստաթուղթ վկայում է, որ 1920թ. հետախուզական բաժանմունքի միայն մայիս ամսվա ծախսերի համար, կառավարության որոշմամբ, բաց է թողնվել 657 հազար ռուբլի<sup>12</sup>:

Բնական է, որ կազմակերպական-ֆինանսական խընդիրներն այդ բնագավառում հեշտ չէին լուծվում և հաճախ հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքը կանգնում էր դժվարությունների առաջ:

1919 թ. մայիսի 2-ին Գլխավոր շտաբի պետին հասցեագրված զեկուցագրում հետախուզական բաժանմունքի պետի 1-ին պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին նշում էր, որ հետախուզական բաժնի գործունեության ըն-

<sup>11</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-201, ց.1, գ. 484, ք. 9, Ֆ.Պ. -202, ց.1, գ.13, ք. 12:

<sup>12</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-199, ց.1, գ. 146, ք. 82:

դարձակման և հարևան երկրներում նոր կետերի բացման հետ կապված, անհրաժեշտ է հոգ տանել, որ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող գործակալներն ինչ-որ ձևով աջակցություն ստանան իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցիչների կողմից (անշուշտ՝ ոչ պաշտոնապես), ինչը գոյություն ունի բոլոր երկրներում և ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ հետախուզության գլուխ միշտ էլ կանգնած են լինում դիվանագիտական ներկայացուցչությունների դեկավարները: Ձեկուցագրում նշվում էր, որ այդ աջակցությունը պետք է գլխավորապես կայանա փաստաթղթերի փաթեթների ուղարկման և տարբեր շրջաններ ուղևորությունների ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար աջակցություն ցուցաբերելու մեջ:

Փաստաթղթում նշվում էր, որ հետախուզության սպան ձախողման դեպքում պաշտոնապես չի օգտվում պաշտպանության իրավունքից, ասիսուսանք էր հայտնվում, որ հայ դիվանագետները դրսում միանգամից մերժում են իրենց դիմած գործակալներին՝ վախենալով հնարավոր դիվանագիտական բարդություններից:

покрытие долга Московскому  
Армянскому Комитету.

3. Докладъ Военнаго Министра объ ассигнованіи 500 тысячъ рублей доктору Саргяну для покупки медикаментовъ.

3. Поручить дипломатическому представителю Джамалю переговорить съ Генераломъ Фонъ-Кроссомъ и узнать не могъ ли Фонъ-Кроссъ оказать содѣйствіе въ покупкѣ въ Германіи для Правительства Арменіи медикаментовъ.

Вместѣ съ тѣмъ поручить доктору Саргяну узнать можетъ ли Саръзъ Городовъ прислать медикаменты для Правительства Арменіи.

4. Ходатайство Военнаго Министра объ отпускѣ ему средствъ на покрытие непредвидѣнныхъ расходовъ, въ 6 милліоновъ рублей: а/на расходы по авіаціи, развѣдки, контръ-развѣдки. и радиотелеграфамъ

4. Отпустить Военному Министру на счетъ кредита Правительства въ 6 милліоновъ рублей: а/на непредвидѣнные расходы 20 тысячъ рублей, б/на контръ-развѣдку на техническое оборудование авіаціи руб. Въ счетъ же сметныхъ предположеній Военнаго Министерства на содержаніе радиотелеграфа отпустить рублей.

5. Ходатайство Министра финансовъ объ отпускѣ ему 2000 рублей на непредвидѣнные расходы на счетъ кредита Правительства въ 6 милліоновъ рублей.

5. Отпустить Министру финансовъ просимую сумму на указанный кредитъ.

*Вмѣстѣ: 3/10/1919. 1919. 14*

Քաղվածք Գլխավոր շտաբի կազմակերպման կանոնադրությունից, 1919 թ. ապրիլի 14




րագործմանը:

Բյուրոյի գործունեության շրջանակներին վերաբերող տեղեկությունների շարքին էին դասվում՝

1) ռազմական բնույթի տվյալները գորամասերի տեղաբաշխման, զինվածության և զինամատակարարման մասին.

2) հարևան երկրների կառավարությունների կողմից ընդունվող քաղաքական բնույթի միջոցառումները, էմիսարական (գործակալական) շարժումը, մամուլի նկատմամբ վերահսկողության ուժեղացումը.


3) տեղեկություններ այլ երկրների հպատակ հայերի նկատմամբ իրականացվող գործողությունների մասին:



Քաղվածք ՀՀ ՆԽ նիստի որոշումից՝ հետախուզությունն արտասահմանում ՀՀ դեսպանների հսկողությանը հանձնելու մասին, 1920 թ.



Հովսեփ Արղուժյան, Իրանում  
ՀՀ դեսպան



Լիպարիտ Նազարյանց,  
Գերմանիայում ՀՀ դեսպան



Միրայել Վարդանյան,  
Իտալիայում ՀՀ դեսպան



Դիանա Արզար, Ճապոնիայում ՀՀ դեսպան

Информационое бюро при министерствѣ Иностраннхъ Дѣл

Еще при старомъ режимѣ армянскіе руководящіе круги были всегда слабо ориентированы о намереніяхъ, какъ бывшаго правительства, так и линіи поведения сосѣднихъ народовъ. Особенно бѣсно отсутствіе информации дадо себя знать во время событій 1917-1918 года, когда армяне оказались все время во власти сосѣднихъ, болѣе ловкихъ, болѣе гибкихъ политически народовъ.

Идея организаціи информационнаго бюро возникла и в 17ом и 18ом годах, и частности была приведена в исполненіе в Тифлидѣ, но там фактически свелась к вопросамъ бѣжавшихъ изъ плѣна, свидѣтельской дѣятельности и вырѣзкамъ изъ газетъ.

Обычно инф. рмационной дѣятельности служить в военномъ министерствѣ контр-развѣдывательное отдѣленіе, но Военному Министерству трудно распространять свою дѣятельность за предѣлы своего государства, исключеніе можетъ быть только для пограничныхъ райо нов. Трудно представить себе армянскаго офицера, который, будучи командированъ от Военнаго Министерства могъ бы свободно промѣнѣвать в предѣлахъ, хотя бы Азербейджана и тамъ свободно заниматься своей дѣятельностью.

Поэтому лучше всего сосредоточить информацию в Министерствѣ иностранныхъ дѣл, представители котораго пользуются правомъ экстерриториальности. Фактически оно должно свестись к роли контр-развѣдывательнаго отдѣленія, но за предѣлами Арменіи-первое время в Грузіи и Азербейджанѣ.

Управленіе этимъ отдѣленіемъ должно быть сосредоточено в Министерствѣ иностранныхъ дѣл, хотя бы в секретномъ отдѣленіи, можно назвать его просто информационнымъ отдѣленіемъ.

В Грузію и Азербейджан, по оглашенію министровъ военнаго и иностранныхъ дѣл должны быть назначены военные атташе, в рукахъ которыхъ и должна быть сосредоточена в вышеупомянутыхъ гос. ударствѣхъ собираніе необходимыхъ свѣдѣній.

Изъ числа свѣдѣній, входящихъ в кругъ дѣятельности бюро -относятся: 1) Военныя - о составѣ воинскихъ частей, вооруженіи, снаряженіи и передвиженіи войскъ и т. д. 2) Политическія - мѣры политическаго характера, принимаемыя сосѣдними правительствами, эмиссарское движеніе

Инф. Бюро Армянской Республики имѣетъ цѣль:

1.- Давать официальные информации о дѣйствіяхъ и распоряженіяхъ Правительства Арменіи.

2.- Сосредоточить и систематизировать всѣ матеріалы и свѣдѣнія о дѣйствіяхъ и распоряженіяхъ Грузинской и Азербейджанской республикъ.

3.- Сосредоточить и систематизировать всѣ прокламации общественнаго мнѣнія, касающіяся взаимоотношеній армянской, грузинской и азербейджанской республикъ.

4.- Слѣдить за правильностью фактическихъ свѣдѣній въ прессѣ и при общественныхъ выступленіяхъ, касающихся распоряженій и дѣйствій Армянскаго Правительства и его официальныхъ органовъ, выступая, въ случаѣ необходимости съ опроверженіями.

5.- Предоставлять Армянскому Правительству возможно полную картину взаимоотношеній армянскаго, грузинскаго и татарскаго народовъ.

6.- Сосредоточить и систематизировать всѣ матеріалы о дѣйствіяхъ турецкихъ властей по отношенію къ армянамъ Закавказья въ оккупированныхъ областяхъ.

7.- Сосредоточить и систематизировать всѣ свѣдѣнія, поступающія въ Армянское Правительство о судьбѣ армянскихъ воиновъ частей и о судьбѣ отдѣльныхъ офицеровъ и солдатъ, какъ убитыхъ, такъ и попавшихъ въ плѣнъ.

8.- Составить по поступающимъ свѣдѣніямъ историческія справки вообще и о боевыхъ дѣйствіяхъ армянскихъ частей въ частности, стараясь съ возможною точностью восстановить картину боевыхъ операцій.

СВѢДѢНІЯ БЮРО СОБИРАЕТЪ, КАКЪ ИЗЪ ПЕЧАТИ, ТАКЪ И ПУТЕМЪ АГЕНТУРЫ.

ШТАТИ:	
I.- Начальникъ	Слѣдить за прессой, имѣть приемъ и ис- .....1000 р. полнять историческіе очерки подъ руководствомъ Начальника.
II.- I-ый Помощникъ	Знать, въ случаѣ необходимости на мѣста ..... 700руб. для сбора свѣдѣній
III.- 2-ой Помощникъ	Ведеть журналы, принимаетъ свѣдѣнія, хранить ..... 700 руб. систематизированный матеріалъ, валидизуетъ
IV.- Дѣлопроизводитель	принимать просителей, даетъ справки ..... 500 руб.
V.- Уполномоченные	Содержаніе по Бюро для поѣздокъ ..... надобности
VI.- Агенты секретныхъ	изъ аванса Начальника Бюро
информации	
VII.- Ремнигтонистъ	.....300 руб.
VIII.- Вѣстовой	..... 50 руб.

Ինչպես նշված է արխիվային փաստաթղթում, բյուրոն պետք է աշխատեր ռազմական հակահետախուզության հետ սերտ առնչությունների պայմաններում՝ փոխադարձ օգնելով միմյանց<sup>16</sup>:

Երկրի իշխանությունները մշտապես ուշադրության կենտրոնում էին պահում հատուկ ծառայությունների կազմակերպման աշխատանքները, համառ ջանքեր էին գործադրվում դրանք ավելի լիարժեք ու ավարտուն դարձնելու ուղղությամբ, հաշվի առնելով համաշխարհային փորձը, փնտրվում էին նոր ուղիներ, ստեղծվում էին նոր օղակներ:

Հետախուզական ծառայությունների կայացման ճանապարհին կարևոր քայլ էր նաև արտասահմանում Հաստատանի դիվանագիտական ներկայացուցիչներին կից զինվորական ներկայացուցությունների (գործակալ, կցորդ, ստաշե) ինստիտուտի հիմնումը:

Դեռ 1918 թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Գաբրիել Ղորղանյանը զինվորական նախարարին ներկայացնում է մի զեկուցում, որտեղ հիմնավորվում է, այսպես կոչված, «զինվորական ազենտների» համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, նշելով, որ, ընդհանուր առմամբ, զինվորական կցորդը պետք է հետևի այլ պետության զինված ուժերի զարգացմանը, ուր ինքը գործուղվել է, և ձեռնա-

մուխ լինի այն ուժերի բացահայտմանը, որոնց հետ հնարավոր է բախումներ լինեն: Ղորղանյանը գտնում էր, որ առանց զինվորական գործակալների աշխատանքի, ռազմական զինված պայքարի մասին հարցերի լուծումը միշտ հիմնված կլինի կասկածելի տվյալների վրա, և այնուհետև եզրահանգում է, որ անհրաժեշտ է ամեն տեղ, այդ թվում՝ Վրաստանում և Ադրբեջանում, իսկույնկեք ստեղծել զինվորական գործակալություններ:

Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության՝ 1919 թ. մարտին թվագրվող փաստաթղթերից մեկում շարադրված են ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները, նրանց հետախուզության օբյեկտները և դիվանագիտական ներկայացուցչության հետ կապերի ձևերն ու եղանակները որպես նրանց գործունեության պարտադիր պայման: Կցորդի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսվում էին չորս մարդ բարձր և երեքը՝ ցածր սպայական կոչումներով<sup>17</sup>: Մասնավորապես, զինվորական կցորդը պետք է բացահայտեր՝

1) հակառակորդի բանակի կազմը խաղաղ ժամանակ, ինչպես նաև նրա հաստիքային ու թվական կազմը.

2) զինվորական ծառայության անցած զինվորականների պահեստակազմը, զինվորական ծառայության գծով արտոնություններ ունեցող այն մարդկանց թիվը, որոնք ա-

<sup>16</sup> Նույն տեղում, Ֆ.Պ. – 200, ց.1, գ. 155, ք. 9:

<sup>17</sup> ՀԱԱ, Ֆ.Պ. – 276, ց. 1, գ. 114, ք. 10-12:

գատված են զինվորական ծառայությունից և պատերազմի դեպքում չեն կարող զենք կրողներ դառնալ.

3) սպառազինության պաշարները, որոնք կարող են օգտագործվել բանակի զորահավաքի ժամանակ.

4) մարտիկների առավելագույն քանակը, որը տվյալ պետությունը կարող էր մարտի դաշտ դուրս բերել.

5) պատերազմի ժամանակ բանակի կազմակերպումը, տեղաբաշխումը.

6) զինվորական խանութների տեղաբաշխվածությունը, դրանց իրական ունեցվածքը.

7) հրետանային և ինժեներական պահեստների, արհեստանոցների տեղաբաշխումը.

8) երկաթուղիների բեռնաթողունակությունը, շարժակազմը.


9) երկաթգծերի վիճակը, երթուղիները.

10) պաշտպանական կառույցների պատրաստվածության աստիճանը և տեղաբաշխումը.

11) տեղական ռազմական վարչության կառուցվածքը և զորահավաքի արագության մասին տվյալները.

12) զորքերի ուսուցման հարցերը.

13) զորքերի մարտական ոգու, կարգապահության վիճակը:



Գրություն ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների  
կից ռազմական կցորդի գործառնական  
պարտականությունների մասին

Հաշվի առնելով զինվորական կցորդի գործունության շրջանակները և կարևորությունը՝ գեներալ Ղորղանյանը իրավացիորեն գտնում էր, որ կցորդը պետք է ունենա համապատասխան զինվորական պատրաստվածություն և ենթարկվի անձամբ զինվորական նախարարին<sup>18</sup>:

Հայաստանի դիվանագիտական կորպուսի կազմում զինվորական ներկայացուցչության համակարգի ստեղծման ուղղությամբ կարևոր քայլ էր Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 8-ի նիստի որոշումը՝ Թիֆլիսում և Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական վարչություն հիմնելու մասին: Որոշման մեջ նաև ասվում էր, որ զինվորական կցորդի նշանակումը պետք է կատարվի զինվորական և արտաքին գործերի նախարարների փոխադարձ համաձայնությամբ:

1919 թ. հունիսի 24-ին Նախարարների խորհրդի կողմից Վրաստանում և Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցչություններին կից զինվորական կցորդների պաշտոնի հաստատումից հետո, զինվորական նախարարի 1919 թ. հուլիսի 13-ի հրամանով, Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական կցորդ է նշանակվում գեներալ-մայոր Հովսեփ Արտեմի Քիչմիշյանը, որի բեղմնավոր գործունեությունն ար-

<sup>18</sup> ՀԱԱ, Ֆ.Պ. – 199, ց.1, գ.27, ք. 27, 62, Ֆ.Պ.-278, ց.1, գ.11, ք. 16:

ժանի է ամենաբարձր դրվատանքի<sup>19</sup>:

Երբ ՀՀ զինվորական նախարարի կողմից զինվորական կցորդի պաշտոնում առաջադրվեց ՀՀ զինվորական դատարանի նախագահ Քիչմիշյանի թեկնածությունը, այն լուրջ դիմադրության հանդիպեց Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լևոն Եվանգուլյանի կողմից, այն մեկնաբանությամբ, որ Քիչմիշյանն ունի միայն իրավաբանական կրթություն, զինվորական գործի գիտակ չէ, լավ չի տիրապետում հայերենին: Սակայն, քանի որ զինվորական կցորդի նշանակման հարցը հրատապ էր, և ուրիշ հարմար թեկնածու չկար, զինվորական նախարարը, ճնշում գործադրելով դիվանագիտական հավատարմատարի վրա, հաստատում է Քիչմիշյանի նշանակումը, և վերջինիս առաջարկվում է անմիջապես անցնել իր պարտականությունների կատարմանը:

Քիչմիշյանը ոչ միայն իրեն արդարացրեց որպես գործի գիտակ և հմուտ կազմակերպիչ, այլև կարճ ժամանակ անց մեծ հեղինակություն դարձավ ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան և այլ երկրների ռազմական ներկայացուցչությունների շրջանում:

Ցավոք, Հովսեփ Քիչմիշյանի մասին կենսագրական տեղեկությունները շատ կցկտուր են, բայց դրա փոխարեն խոսում են նրա ստորագրությամբ ոչ սակավ փաստաթղթերն

<sup>19</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-204, ց.1, գ. 40, ք. 71, գ. 132, ք. 104:

ու զեկուցագրերը, որոնք վկայում են վերջինս արհեստավար-  
ժուրյան մասին:

12

Не подлежать оглашению.

ШТАТЪ ВОЕННОЙ АГЕНТУРЪ ПРИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ ВЪ ГРУЗИИ.

Должность	Число	Окладъ	Примѣчаніе
	чиновъ	содержанія	
Военный Агентъ Полковникъ или Подполковникъ (преимущественно Генеральнаго Штаба)	1	1)	1) По чину и должности соответствующей Командиру полка плюс добавочныя на представительство въ отношествіи съ дорожною жизнью.
Помощникъ Военнаго Агента Оберъ-Офицеръ	1	2)	2) По чину и должности соответствующей Командиру батальона плюс добавочныя на представительство въ отношествіи съ дорожною жизнью.
Прикомандированніе къ Военному Агенту	3)	4)	
Штабъ или оберъ-Офицеръ	2		
Всего	4		
Нижніе чины			Для сокращенія расходовъ на содержаніе чиновъ помощникъ можетъ продолжать числиться въ своей части.
Деньжки	2		
Для посылки	1		3) Не болѣе двухъ
Всего	3		4) Весь содержанія
			5) Не болѣе четырехъ
Подъ канцелярію Военнаго Агента отводится помещеніе при Миссіи.			
Всѣ канцелярскія принадлежности отпускаются изъ Миссіи			
Военному Агенту отпускается авансъ на веденіи развѣдки.			

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից  
զինվորական գործակալների հաստիքացուցակը

Թուրքիայի և Ադրբեջանի վերաբերյալ տեղեկությունների ստացման ուղղությամբ նրա ծավալած աշխատանքների մասին կխոսվի ավելի ուշ, սակայն ուշադրության է արժանի նաև նրա զեկուցագրերից մեկը ՀՀ զինվորական նախարարին (1920 թ. մայիսի 21), որտեղ Քիչմիշյանը դժգոհություն է հայտնում, որ նամակներն ու փաթեթներն իրեն ուղարկվում են առանց գաղտնիության համապատասխան կանոնների պահպանության, որի արդյունքում դրանք ընթերցվում են Վրաստանի հակահետախուզական մարմինների կողմից: Նման մտտեցումը Քիչմիշյանն իրավացիորեն համարում է հանցավոր և անթույլատրելի հետախուզական աշխատանքում, մտահոգություն է հայտնում, որ այդ ամենի արդյունքում կարող են բարդություններ ծագել վրացական իշխանությունների հետ և խնդրում է նամակագրությունն իրականացնել միայն հատուկ ցրիչների կամ դիվանագիտական անձեռնմխելի փոստի միջոցով:

Խնդիրը համապատասխան արձագանք է գտնում ՀՀ զինվորական նախարարությունում. 1920 թ. օգոստոսին Գլխավոր շտաբի տեսչական բաժանմունքի պետի կողմից շրջանառության է դրվում մի փաստաթուղթ, որտեղ ասվում է, որ զինվորական նախարարի հրամանով, այսուհետ Թիֆլիս և այլ վայրեր փաթեթներն ու նամակները պետք է ուղարկվեն միայն ցրիչների միջոցով, իսկ հեռագրերը՝ ամբողջությամբ ծածկագրված:

ВОЕННОМУ МИНИСТРУ

РАПОРТЪ

11 мая 1920  
№ 217

Представляя при семь подлинное объяснение Главного Интендантства Управления от 10-го сего мая № 5,924, какъ много Вы можете усмотреть, что рѣчь идетъ о развѣдкѣ, доказу, что таковыя приказы мнѣ по почте, безъ соблюденія элементарныхъ правилъ конспираціи въ военномъ, казенномъ развѣдывательской части, и видѣніе установленія военной цензуры въ Грузіи, подтвержденія наравѣ съ общою корреспонденціею, перестраиваю.

Кроме сего, принимая во вниманіе систематическое игнорированіе со стороны Главнаго Интендантскаго Управления требованій конспираціи въ перепискѣ секретнаго характера и принимая это обстоятельство исключительно какъ личную ошибку младшихъ чиновъ Управления, ведущихъ корреспонденцію, вѣру не отдавая преподавать всѣмъ учреждениямъ Военнаго Удѣла правила и требованія болѣе внимательнаго и осторожнаго отношенія къ подобнаго рода перепискѣ.

Не говоря о недопустимости открыто разглашать всѣ наши тайны и давать въ руки враговъ цѣлую данную раскладку на развѣдку, подобнаго характера вѣрнѣе, проступило в легкомысленное отношеніе къ столь серьезному вопросу, какъ развѣдка, ставить меня и чиновъ вѣрнѣе мнѣ Управления въ крайне невыгодное и неблагоприятное положеніе передъ грузинскими властями, въ частности передъ грузинской контр-развѣдкой, и имѣть параллелизмъ въ дальнѣйшей всей моей работѣ въ этой области.

Прошу Вашего распоряженія - впредь всю секретную и простую корреспонденцію на мое имя отсылать - для пересылки мнѣ въ Тифлисъ - въ Инженерство Инженерныхъ Дѣлъ, которое имѣетъ сложную курьерскую, аккуратно по-

оставляющахъ почту Дипломатической Миссіи въ Грузіи.

ПРИКЛОНЕНІИ: Объясненіе Главнаго Интендантскаго Управления от 10-го мая 1920

Генераль-майоръ *В. М. Мухоморовъ*

Адъютантъ *Игорь Викторовъ*

Վրաստանում զինվորական կցորդ Հ. Քիշմիշկի գեկույցը գաղտնիության կանոնների խախտման վերաբերյալ, 1920 թ.

11 мая 1920  
№ 217  
Представляя при семь подлинное объяснение Главного Интендантства Управления от 10-го сего мая № 5,924, какъ много Вы можете усмотреть, что рѣчь идетъ о развѣдкѣ, доказу, что таковыя приказы мнѣ по почте, безъ соблюденія элементарныхъ правилъ конспираціи въ военномъ, казенномъ развѣдывательской части, и видѣніе установленія военной цензуры въ Грузіи, подтвержденія наравѣ съ общою корреспонденціею, перестраиваю.

Ваше объяснение, принятое во внимание систематическое игнорирование со стороны Главного Интендантского Управления требований конспирации в переписке секретного характера и принимая это обстоятельство исключительно как личную ошибку младших чинов Управления, ведущих корреспонденцию, веру не отдавая преподавать всем учреждениям Военного Удѣла правила и требования более внимательного и осторожного отношения к подобному рода переписке. Не говоря о недопустимости открыто разглашать все наши тайны и давать в руки врагов целую данную раскладку на разведку, подобного характера вернее, проступило в легкомысленное отношение к столь серьезному вопросу, как разведка, ставить меня и чинов вернее мне Управления в крайне невыгодное и неблагоприятное положение перед грузинскими властями, в частности перед грузинской контр-разведкой, и иметь параллелизм в дальнейшей всей моей работе в этой области. Прошу Вашего распоряжения - впредь всю секретную и простую корреспонденцию на мое имя отсылать - для пересылки мне в Тифлисс - в Инженерство Инженерных Дѣлъ, которое имеет сложную курьерскую, аккуратно по-

Գլխավոր շտաբի տեսչական բաժնի պետի գրությունը գաղտնիության կանոնները պահպանելու անհրաժեշտության մասին, 1920 թ. օգոստոս

Հետաքրքրական է նաև Քիշմիշյանի համագործակցությունը նշանավոր հետախույզ Տիգրան Դեոյանցի հետ: Վերջինս Թիֆլիսում գտնվելիս տեղեկություններ է ստա-



Վրաստանում ՀՀ ռազմական ներկայացուցչի կնիքի դրոշմը

նում, որ շուտով սկսվելու է հայ-վրացական պատերազմ, և շտապում է այդ մասին հայտնել ռազմական կցորդ Քիշմիշյանին: Հասկանալով տեղեկատվության լրջությունը՝ Քիշմիշյանը հանձնարարում է անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել

վրացական զորքերի դասավորվածության, զորահավաքային նախագծերի, Վրաստանի ժողովրդական գվարդիայի թվաքանակի և գործողությունների պլանի մասին: Դեռ յանցը, օգտագործելով իր կապերը, կարողանում է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունները, որոնք էլ Քիշմիշյանը հույժ գաղտնի ծածկագրով ուղարկում է Երևան՝ ակնկալելով, որ դրանք համապատասխան վերլուծության կենթարկվեն ռազմական նախարարությունում և օգտակար կլինեն հայ-վրացական հնարավոր ռազմական բախման պարագայում<sup>20</sup>:

<sup>20</sup> Գեոյեանց Ս., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», հ. 6. Բոստոն, 1944 թ.:

Պետք է նշել, որ և Թիֆլիսի, և Բաքվի զինվորական գործակալությունները շատ արդյունավետ հետախուզական գործունեություն ծավալեցին, և, չնայած սուղ ֆինանսական միջոցներին, կարողացան արդարացնել իրենց գոյությունը: Սակայն կառավարությունը որոշակի անհեռատեսություն դրսևորեց՝ 1919 թ.



ՀՀ ներկայացուցչի կնիքի դրոշմը

նոյեմբերի 27-ի նիստում որոշում կայացնելով վերացնել Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչությանը կից Ջորական ներկայացուցչությունը: Որոշման դեմ իրավա-ցիորեն առարկում էր դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանը, գտնելով, որ զինվորական վարչության կազմալուծումը զգալիորեն թուլացնում է իրենց դիրքերը և նեղացնում հետախուզական հնարավորությունները<sup>21</sup>: Սակայն այս առարկություններն արձագանք չեն գտնում, Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցչությանը կից զինվորական վարչությունը լուծարվում է, և գործի ողջ ծանրությունն ընկնում է միայն ռազմական կցորդի վրա: ՀՀ կառավարությունն իր որոշումը բացատրում է ֆինանսա-

<sup>21</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-276, ց. 1, գ. 196, թ. 98, Ֆ.Պ.-200, ց.1, գ. 300, թ. 42:

կան միջոցների բացակայությամբ և նման հաստիքակազմ պահելու անհնարինությամբ:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ հետախուզական գործի կազմակերպման համար ֆինանսական հատկացումների շուրջ դժվար հաղթահարվող բյուրոկրատական քաշքշուկներ են եղել, որին մասնակցել են տարբեր գերատեսչություններ և օղակներ: Հատկապես դրսում աշխատող հայ հետախույզները հաճախ իրենք են տարբեր տեղերից միջոցներ հայթայթել գործը չձախողելու համար: Այս մասին շատ պատկերավոր է արտահայտվում Ս. Դևոյանցը. «Իսկ բիդճեն այնքան պզտիկ էր, այնքան աննշան հայկական բուրլիներով, որ Հայաստանից դուրս համարեայ արժեք չունէր: Մինչդեռ այդ ճիւղերին պէտք է յատկացնէին շատ խոշոր գումարներ՝ երկրի ինքնապաշտպանութեան համար, որովհետեւ այդ երկու ճիւղերը պէտք է կազմէին Հայաստանի պզտիկ պետութեան աչքերը եւ սկանջները, դիւանագիտական դիմումների հիմքը»<sup>22</sup>:

Նշված պատմական փաստերն ակնհայտ են դարձնում, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները՝ հետախուզությունն ու հակահետախուզությունը կայացել են՝ անցնելով կազմակերպական-ֆինանսական և կադրային-տեխնիկական բարդ ուղի: Երի-

<sup>22</sup> Դևոյանց Ս., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», հ. 2. Բոստոն, 1945, էջ 84-85:

տասարդ հանրապետության կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել՝ փորձելով ուշադրության կենտրոնում պահել և հնարավորինս աջակցել պետական անվտանգության համակարգի ձևավորմանը: Այլ բան է, որ պատմական խճճված իրադրությունը, երկրի քայքայված ու անկայուն իրավիճակը, բազում խնդիրների առկայությունը, անհնարին դարձրին Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների դիմակայումը ժամանակի մարտահրավերներին:



Ռադիոհեռագրական ապարատ, 1920 թ.

Այս պայմաններում հիացմունքի է արժանի ՀՀ ռազմական նախարարության Գլխավոր շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժանմունքի գործունեությունը: Հիմնվելով գործակալական տվյալների վրա՝ կարճ ժամանակամիջոցում բաժանմունքը ստեղծել է տեղեկատվության ահռելի պաշար, որը հնարավորություն էր տալիս բազմակողմանի տեղեկություններ ստանալ տարածաշրջանում առկա ուժերի, քաղաքական անցուղարձի, հակառակորդի ծավալած հետախուզական և այլ թշնամական գործունեության, ռազմաքաղաքական բնույթի հարցերի մասին և ժամանակին հաղորդել դրանք պետության ու բանակի ղեկավարությանը:

**ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՔԻԱՅԻ  
ԵՎ ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ  
ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՂԵՄ**

Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության առանցքը կազմել է պայքարը Ադրբեջանի և Թուրքիայի թշնամական գործունեության դեմ:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական հատուկ ծառայությունները՝ փոքրաքանակ կադրային ռեսուրսներով և սուղ հնարավորություններով, իրենց դրսևորել են լավագույն կողմերից՝ կանխելով թշնամու քայքայիչ գործունեությունը, վնասագերծելով նրա շատ գործակալներին և գորավիզ լինելով հանրապետության անվտանգությանը:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացման պայմաններում, հաղթահարելով բոլոր դժվարությունները, Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները ձեռք էին բերում անհրաժեշտ տեղեկություններ Անդրկովկասում ուժերի դասավորության, գորքերի տեղաշարժի և հատկապես Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ձեռնարկվող քայքայիչ գործողությունների վերաբերյալ:

Նշանավոր հետախույզ Տիգրան Դևոյանցն իր «Կեանքիս դրուագներից» հուշագրքում նշում է, որ Ադրբեջանը Երևանում լրտեսական ցանց ուներ, իսկ նրանց դիվանագիտական ներկայացուցիչը, օգտվելով իր դիրքից, ծածկագիր հեռագրերով մշտապես հետախուզական բնույ-

թի տեղեկություններ էր հայտնում իր կառավարությանը, ապա, ի պատիվ հայկական հակահետախուզության, ընդգծում. «Բարեբախտաբար, Հայաստանի կառավարությունը օրը օրին այս հեռագրերի միջոցով իրազեկ էր պահում բշնամու ծրագրերին եւ ըստ այնմ միջոցների դիմում: Եթե Ատերբեյճանի դիւանագիտական ներկայացուցիչը չէզոք գօտիի վրայ չթախանուէր «աւագակների» կողմից, Թիֆլիսի վրայով Բագուից ուղարկուած գումարով միայն Շարուր-Նախիջեւանի շրջանի թաթարական բանակի թիւր պետք է հասնէր 10.000-ի, նոյն համեմատութեամբ պէտք է աւելանար կռուող թաթարների թիւր Բէյուկ-Վիդիի, Չանգիրասարի եւ այլ շրջանների մէջ, եւ ամբողջ Հայաստանի հայութիւնը պիտի գտնուէր բնաջնջման սպառնալիքի տակ»<sup>23</sup>:

«Հայաստանը ներսից պայթեցնելու համար մեծ ճիգ էր թափում, մասնավորապէս Ազրբեջանը, որը 1919 թ. մարտին դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնով Երևան ուղարկեց իր մոլեռանդ համաթուրքապաշտ գործիչներից մեկին՝ Խան-Թեքինսկուն, պաշտոն տալով նրան՝ Հայաստանի ներսում մահմեդական խռովություններ կազմակերպելու», - նշում է Սիմոն Վրացյանը<sup>24</sup>:


Խան-Թեքինսկու Երևան ժամանելու առաջին իսկ օրվանից Հայաստանի կառավարությունը տեղյակ էր լինում

<sup>23</sup> Դեոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», հ. 2, Բոստոն, 1945, էջ 81:

<sup>24</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 310:

նրա բոլոր ծածկագիր հեռագրերի բովանդակությանը և, ի վերջո, բացահայտեց, որ Խան-Թեքինսկին, օգտվելով դիվանագետի անձեռնմխելիությունից, փաստորեն զբաղվում է բացահայտ լրտեսությամբ՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդելով շատ ոլորտների, այդ թվում հայկական բանակի կառուցվածքի և զինվածության վերաբերյալ:

Խան-Թեքինսկին ամեն կերպ աշխատում էր խոչընդոտել Շարուրի և Նախիջևանի միացմանը Հայաստանին և ծածկագիր հեռագրերի միջոցով իր կառավարությանը իրազեկում էր հարավային և այլ շրջաններում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի մասին: Այդ նպատակների համար նա Ադրբեջանի կառավարությունից անընդհատ խոշոր գումարներ էր պահանջում՝ միաժամանակ պնդելով ուժ




Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկու կազմած ծածկահեռագիր, 1920 թ.

գործադրել ՀՀ կառավարության վրա<sup>25</sup>:

Խան-Թեքինսկու լրտեսական գործունեության մասին նշվում է նաև զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետ գնդապետ Շնեուրի և օպերատիվ բաժնի պետ, կապիտան Մեդվեդևի կողմից կազմված ռազմական ակնարկներում, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետության ռազմական դրությանը՝ մինչև 1919 թ. սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածը: Հենվելով հետախուզական տվյալների վրա՝ նշվում է, որ հակահայկական գործողությունների կազմակերպման ուղղությամբ եռանդուն գործունեություն է իրականացնում Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին, որը գաղտնի հարաբերություններ է պահպանում Շարուր-Նախիջևանի թաթարների հետ՝ նրանց դրդելով ապստամբության, փող մատակարարելով և այլն<sup>26</sup>:


<sup>25</sup> Վիրաբյան Վ., ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-20 թթ., Երևան, 2006, էջ 98:

<sup>26</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-204, ց. 1, գ. 133, ք. 2:



Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ ծածկահեռագրերի վերձանված տեքստերը

Աղբրեջանցի «ղիվանագետների» Բաբու ուղարկվող ծածկահեռագրերի վերծանումից պարզ է դառնում, որ հարևան պետությունը, բացի մահմեդական բնակչության ներքին ընդվզումները կազմակերպելուց և ֆինանսավորելուց, ջանք չէր խնայում Հայաստանը տնտեսապես կազմալուծելու ուղղությամբ՝



Մարտիրոս Հարություն, ՀՀ ներկայացուցիչ Աղբրեջանում

որպես միջոց օգտագործելով իր ձեռքում կենտրոնացված նավթի, մագուքի, բենզինի պաշարները:

Գաղտնի գրագրությունների մի պատկառելի մասն էլ հայկական զինված ուժերի վերաբերյալ է, որտեղ շարադրված են ձեռք բերված տեղեկությունները հայկական բանակի թվաքանակի, զորատեսակների, զինվածության և այլ առանցքային հարցերի վերաբերյալ:

Հայաստանի կառավարությունը պահանջեց, որ Խան-Թեքինսկին հետ կանչվի, սակայն նրան փոխարինողը շարունակեց իր նախորդի սկսած գործը:



Բաքվի Տելեֆոնայա 5 հասցեում տեղակայված ՀՀ ներկայացուցչության շենքը



1920 թ. մայիսին, Աղբրեջանի խորհրդայնացումից հետո, այդ հեռագրերը հրատարակվեցին առանձին գրքույկով («Գաղտնի փաստաթղթեր». Աղբրեջանի դավադրա-

կան գործունեության մի էջ, Երևան հրատ., 1920):

Բնական է, որ հայկական հատուկ ծառայություններն այդ տարիներին զգոն էին և ուշադրության կենտրոնում էին պահում Երևանում տեղակայված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը՝ իրավա-ցիորեն այն համարելով հակահայկական գործողությունների մշակման և լրտեսական-հետախուզական կենտրոն:


1920 թ. մայիսի 19-22-ը ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական բյուրոն մի հաղորդագրություն հղեց պառլամենտի նախագահին, ՀՀ արդարադատության, ներքին գործերի և զինվորական նախարարություններին, բանակի սպարապետ գեներալ Թ. Նազարբեկյանին, ինչպես նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական

հավատարմատարին, Բաթումի ընդհանուր հյուպատոսին, Հայաստանի պատվիրակությանը Փարիզում, ՀՀ դեսպաններին Իտալիայում, Լոնդոնում, Վաշինգտոնում և այլուր, Հ.Յ.Գ. Բյուրոյին, որում ասված էր, որ ՀՀ արտգործնախարարության կողմից հրատարակվել է Ադրբեջանի



Ալեքսանդր Բեկգադյան, ՀՀ ներկայացուցիչ Վրաստանում

Հանրապետության Երևանում գտնվող դիվանագիտական ներկայացուցիչների ու նրանց գործակալների միջև փոխանակված գաղտնի գրագրությունը: Հայտնվում էր, որ այն բացահայտում է Ադրբեջանի կառավարության՝ Հայաստանում ունեցած հակապետական, հակահայկական ագրեսիվ գործունեությունը, որն ուղղված է եղել խարխուլելու հայկական պետականության հիմքերը, հեղինակագրկելու և տապալելու ՀՀ իշխանություններին, ինչպես նաև ՀՀ տարածքի անբաժան մասը կազմող Չանգիբասարի շրջանը բռնակցելու Ադրբեջանին<sup>27</sup>:



Հեռագիր՝ ՀՀ-ում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցներին ձեռքակալելու մասին

<sup>27</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-200, ց.1, գ. 427, մաս 2, ք. 284, 288, 290, գ. 461, ք. 24-27:

1920 թ. հունիսի 3-ին ՀՀ զինվորական դատարանի կողմից լսվեց Երևանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության պահակազորի նախկին աշխատակիցներ Մաշադի Մամեդ Հուսեյն օղլու, Հուսեյն Վալի օղլու և Մուսա Մաշադի Մամեդ օղլու դատը, որոնք մեղադրվում էին Չանգիբասարյան խռովարարների աջակցելու և հրահրելու մեջ: Վերջիններս Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատար Թեմուր բեկ Մակինսկու անմիջական հանձնարարությամբ փորձ էին կատարել Չանգիբասարի խռովարարներին փող հասցնել, որը ձախողվել էր Էջմիածնի գավառական միլիցիայի զգոնության շնորհիվ: Կայացված դատավճռով Հուսեյն Վալի օղլին դատապարտվեց անժամկետ աքսորի, իսկ մյուս երկուսը՝ տաժանակիր աշխատանքների 10 տարի ժամկետով<sup>28</sup>:

ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի գործունեությանն առնչվող արխիվային վավերագրերից երևում է, որ 1919 թ. վերջին-1920թ. սկզբին Ադրբեջանի բանակի դեմ տարած հաղթանակներում վճռորոշ դեր է խաղացել հայկական հետախուզությունը, որի ջանքերով ձեռք է բերվել Ադրբեջանի բանակի ծածկագիրը (շիֆրը), ինչը հնարավորություն է տվել հայկական կողմին հստակ պատկերացում ունենալ հակառակորդի զորքի տեղաբաշխման

ու քանակի մասին և ջախջախիչ հարված հասցնել:

1920 թ. հունվարի 17-ին Թիֆլիսում ռազմական կցորդ Հ. Քիշմիշյանը ՀՀ ռազմական նախարարին ուղղված իր հույժ գաղտնի զեկուցագրում նշում է, որ վստահելի անձ Բոգդան Դավիդովիչ Ավան-Յուզբաշի Խան Սագնախսկին համաձայնության է եկել ադրբեջանական զորքերի ջոկատի շտաբի պետ, փոխզննապետ իշխան Էրիստովի հետ, և վերջինս խոստացել է 200-300 հազար ռուբլու դիմաց իրենց տրամադրել ադրբեջանական բանակի շիֆրը, ողջ գաղտնի գրագրությունը, ադրբեջանական բանակի դիսլոկացիան և Չանգեզուրի վրա ենթադրվող հարձակման պլանը, անգամ պարտավորվելով ռազմական օպերացիայի ողջ պլանը մշակել հայկական կողմի ցուցումների համաձայն և մշտապես տեղյակ պահել Ադրբեջանի բոլոր ռազմական գործողությունների մասին:

Հայկական հետախուզությունը թեպետ երիտասարդ էր, սակայն այնքան էլ անզգույշ չէր, որպեսզի միանգամից հավատար ադրբեջանական սպայի մտադրություններին և բացառեր ադրբեջանական կողմից հնարավոր ապատեղեկատվության տարածումը: Ուստի Քիշմիշյանը զեկուցագրում ավելացնում է, որ գումարը Էրիստովին կտրվի միայն վերոհիշյալ փաստաթղթերի ստուգումից հետո:

Նույն զեկուցագրում Քիշմիշյանը կարծիք է հայտնում, որ պետք չէ այս հնարավորությունը բաց թողնել և


<sup>28</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-200, ց.1, գ. 249, մաս 2, թ. 415, 427:

անհրաժեշտ է Էրիստովի հետ անմիջական շփում հաստատելու նպատակով Թիֆլիս գործուղել կապիտան Վահագն Մուրադյանին, որի պարտականությունների մեջ պետք է մտնեն նաև ստացված տեղեկությունների ստուգումը<sup>29</sup>:

Յավոք, հետագա գործողությունների վերաբերյալ փաստագրական տեղեկություններ չկան, սակայն կրկին անդրադարձ կատարենք Տ. Դևոյանցի հուշերին, որն այս կապակցությամբ վկայում է. «Հայաստանի հետախուզական բաժանմունքը 200.000 ռուբլիով կաշառեց Նժդեհի դեմ գտնուող Ազրբեյջանի բանակի սպայակոյտի պետին, որը դասատրեց իր զորքերը, բնդանօթները եւ գնդացիները մեր ուզած ձեռով եւ, երբ կռիւր սկսուեց, Նժդեհի ուժերը ջախջախեցին Ազրբեյջանեան շատ ատելի ուժեղ բանակը, գրաւեցին կամ ոչնչացրին բշնամու ուժեղ հրետանին եւ գնդացիները եւ բաւական ռազմամթերք»<sup>30</sup>:

<sup>29</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-276, ց. 1, գ. 184, ք. 3-4:

<sup>30</sup> Դեւոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», ք. 4, յուլիս-օգոստոս, Բոստոն, 1945, էջ 83:



Հ. Բիշնիշյանի գեկույցը ադրբեջանական բանակի գաղտնի շիֆրը և մամակագրությունը ձեռք բերելու մասին, 1920 թ.

Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի գործունեության արտացոլումն են մեզ հասած 22 հետախուզական ամփոփագրերը, որոնք մասամբ լույս են սփռում այն բացի վրա, որը կա Առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծման գործընթացների լիարժեք բացահայտման մեջ: Ամփոփագրերը և հետախուզական բնույթի զեկուցագրերը տեղեկություններ են պարունակում Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի, բոլշևիկյան Ռուսաստանի և այլ երկրների վերաբերյալ՝ որոշակի պատկերացում տալով նրանց գործերի թվաքանակի, տեղաբաշխման, զինվածության և այլնի մասին:

Հայկական հատուկ ծառայությունների աշխատանքի խոսուն վկայություն է նաև ՀՀ գործերի հրամանատարի շտաբի 1920 թ. պաշտոնական հաղորդագրությունը, որտեղ ասվում է. «Անցյալ տարվա դեկտեմբերի վերջերից սկսած մենք ունեցել ենք մշտական գործակալական կապ Թուրքիայի և Ադրբեջանի բոլոր քաղաքների հետ, սիստեմատիկ կերպով ստանալով ամենաստույգ ինֆորմացիա Արևելյան Անատոլիայի ազգայնական շարժման մասին, որի գլուխ կանգնած է Մուստաֆա Քեմալ փաշան, որն իրեն նպատակ է դրել, միանալով բոլշևիկների և թրքական Ադրբեջանի հետ, ոչնչացնելու տեղի հայ ժողովուրդը, որը խանգարում է իրենց ձգտումներն իրականացնելուն, այն է՝ միացնել թուրքական ցեղերը, որոնք զինվելով և կազմակերպվելով

պետք է պայքար սկսեն Անտանտի լուծը թորափելու համար:

...Խալիլ և Նուրի փաշաները բազմաթիվ թուրքական գործակալ սպաներով գործում են Ադրբեջանում և Դաղստանում, որտեղ նրանք պատրաստում են զինված ուժ Թուրքիային միանալու և աշխատում են միաժամանակ նեղ օղակով շրջապատել Հայաստանը՝ մուսուլմանների ապստամբություններ յարուցանելով Նախիջեանում, Չանգեզուրում, Վեդի-Քասարում և Ղարսի շրջանում»<sup>31</sup>:

Արխիվային վավերագրերի վերլուծությունից երևում է, որ հայկական հետախուզության մշտական ուշադրության կենտրոնում են գտնվել Թուրքիայում ծավալվող իրադարձությունները, քանի որ դրանք կարող էին անմիջական սպառնալիք հանդիսանալ հանրապետության անվտանգությանը:

Իրավիճակը լիարժեք վերահսկելու նպատակով 1919 թ. մայիսի 24-ի գաղտնի հրամանով Թուրքիա է գործուղվում շտաբս-կապիտան Տ. Դևոյանցը, որը, հրամանի համաձայն, անհրաժեշտության դեպքում պետք է կատարեր նաև արտաքին գործերի նախարարության առաջադրանքները:


Հասնելով Կոստանդնուպոլիս՝ Դևոյանցը, չնայած ֆինանսական և այլ դժվարություններին, կարճ ժամանակում կարողանում է կազմակերպել հետախուզական գործը և

<sup>31</sup> «Յառաջ» / Երևան, 9 մայիսի, 1920, ք. 95:

ստեղծում անհրաժեշտ կապեր: Նա ուներ 2 օգնական և անզլերենի, ֆրանսերենի, թուրքերենի իմացությամբ քարգմանիչ:

4. Պոլսում նա համագործակցում է անգլիական բանակում ծառայող Հայկազն Ղազարյանի հետ, և համատեղ ուժերով ձեռք են բերվում արժեքավոր տեղեկություններ Թուրքիայում տեղի ունեցող իրադատությունների, քաղաքական փոփոխությունների ու շրջադարձերի մասին. «Տեղեկատվության տեսակետով շատ արժեքատու էին Ե.Թ.-ի ամեն օր ինձ տուած լուրերը: Ամեն օր նա տալիս էր ինձ պատճենները Թուրքիոյ բոլոր նախարարութիւնների գաղտնի նամակների, հրահանգների, հեռագրերի՝ ստացուած եւ ուղարկուած: Այդ միջոցին սկսուել էր Միլի շարժումը եւ Պոլսոյ Կենտրոնական կառավարութիւնը աչքակապուկ էր խաղում Դաշնակիցների հետ, հակառակ այն բանին, որ նա էլ ուժ էր տալիս գաղտնի կերպով այդ շարժումին»<sup>32</sup>:

<sup>32</sup> Դեյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», ք. 1., Բուստուն, 1945:



Հետախուզական տեղեկագիր Թուրքիայի և Ադրբեջանի գծով, 1919 թ.

Դևոյանցի արդյունավետ աշխատանքի մասին են վկայում նաև նրա ուղարկած հաղորդագրությունները գեներալ Գ. Ղորղանյանին, որոնցում կարևոր տեղեկություններ կան թուրքական զորքերի տեղաշարժի, ձեռնարկումների և պատրաստվածության մասին:

1919 թ. օգոստոսի 18-ի զեկուցագրում Դևոյանցը տեղեկություններ է հաղորդում Վանի շրջանում տեղակայված 11-րդ դիվիզիայի գործունեության, զինամթերքի պահեստների կազմավորման, Դիլմանի և Ուրմիայի շրջանում քուրդ Սմկոյի և Իսմայիլ աղայի գլխավորությամբ զինված 1500 քրդերի մասին: Մեկ այլ զեկուցագրում Դևոյանցը տեղեկացնում է, որ Տրապիզոնի վիլայեթում բոլոր թուրքական կուսակցությունները միավորվել ու գործում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության հրահանգների համաձայն: Միաժամանակ Դևոյանցը հայտնում է այն ժամանակվա վրացական իշխանությունների հակահայկական գործունեության մասին, մասնավորապես, որ Կ. Պոլսում Վրաստանի ներկայացուցիչ Ռիխցլաձեն հաճախակի հանդիպումներ է ունենում երիտթուրքերի հետ:

1919 թ. օգոստոսի 24-ի զեկուցագրում Դևոյանցը արժեքավոր տեղեկույթ է հաղորդում Դիարբեքիում, Սդերթում, Նարզանում և Բիթլիսում «Միլի Թաշկիլաթ» շարժում կազմակերպելու մասին: Նա գրում է, որ Հայաստանի Հանրապետության կայացմանը խոչընդոտելու նպատակով

դրան է հավաքվում, կազմավորվում են չեփինների խմբեր, իսկ Մուշի շրջանի քրդերի առաջնորդը Մուստաֆա Քեմալի կողմից նշանակվել է բոլոր քրդական ուժերի հրամանատար:

Թվում է, թե այս հաղորդագրությունները պետք է սթափեցնեին ՀՀ իշխանություններին և ստիպեին լրջորեն նախապատրաստվել թուրքական ահազնացող վտանգին, սակայն աշխարհաքաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանները սերյան խոստումներով չափից դուրս ոգևորված երիտասարդ հանրապետության իշխանություններին հնարավորություն չտվեցին լիարժեք օգտագործել հետախուզական տվյալները:

1919 թ. դեկտեմբերին, ՀՀ զինվորական նախարարության ղեկավարության պահանջով, Դևոյանցը հետկանչվեց Կ. Պոլսից և ուղարկվեց Կարս՝ ռազմաքաղաքական նշանակություն ունեցող այլ հանձնարարությամբ: Վերադառնալիս նա Պոլսում թողեց մի խումբ փորձված հետախույզների, որոնք շարունակում էին Հայաստան ուղարկել կարևոր տեղեկություններ:

Секретно.  
Приложение к сводку № 20

### Дислокация Советских войск в:

Азербайджане — в Советской Армии. Штаб в Баку.  
Командует Девандовский.

20 пех. дивизия — Штаб в Ганджа, Командует Великийович

ММ полков от 175 до 178  
16 легких орудий  
4 гаубицы  
32-48 пулеметов  
6—7 тысяч штыков

Ганджа и Ахстаф.

28 пех. дивизия — Штаб в Баку, командует Нестроенский

8 легких орудий  
4 гаубицы  
32 пулемета  
6 тысяч штыков

Баку, Баладжары, Ялама и по деревням  
в районе Баку

(По последи. сведениям 28-я дивизия переброшена на Польский фронт)  
32-я пех. дивизия — Штаб в Агдам, командует матрость М.

ММ полков от 280 до 288  
12 легких орудий  
4 гаубицы  
28 пулеметов  
6—7 тысяч штыков

Барабахь

Кавалерийский Корпус — Штаб в Евлах. Командир неизвестен.

В состав Корпуса входят:  
Одна дивизия и одна бригада  
8 орудий  
24 пулемета  
3000—3500 сабель

Евлах, Нуха, Закаталы, Казахь

(В состав Кавалерийской бригады входят 2-й Таманский Конный полк оперировавший в Казахо—Дезижанском районе)

4 бронированных поезда („Трест Интернационал“, „Красный Дагестан“, „Красная Астрахань“, „Тимофей Ульянов“)

4 легких орудия на броневиках, по одному на каждом.

Всего на территории Азербайджана русских войск:

18—20 тысяч штыков.  
3000—3500 сабель.  
120—150 пулеметов.  
42 легких орудий.  
12 (по меньшей мере) гаубиц.

Примечание: Экипировка Советских войск в Азербайджане плохая. Многие красноармейцы босы и в лохмотьях. Преобладают юнты. Многие без оружия. Состояние оружия отвратительное. Винтовки в ржавчинах, штыки потупы, а часто совсем отсутствуют. Приклады расщеплены. Мундир сбит.

В кавалерии амуниция и кони также в плохом состоянии. В частях замечаются обилие телефонных аппаратов и проводов. Все Советские пехотные полки — 2-х батальонного состава.

### Дислокация турецких сил группировавшихся на границе Армении:

1-я Турецкая Армия — Командь Карабекерли Паша.

Эрзерум — Штаб 3-й дивизии — Рушти бей.

17-й пех. полк.

Гасант-Кала — 28 пех. полк (Штаб): одна батарея 4 горных орудий.

Тертуш — Два батальона 28-го полка.

Вирдус — Одна батальон 28-го и часть 29 пех. полка.

Хоровак — Штаб 12-й дивизии — Халал бей.

Зангаз — 24-й пех. полк.

Коприкой — 35-й пех. полк.

Карзалис (Алзакертская) — 36-й пех. полк.

Примечание: Части 36-го пех. полка захвачены в Охлы-спонь районе.

В походе в сторону Охлы — 3-я дивизия — Халал бей.

7-й, 8-й и 11-й пех. полки.

Всего в дивизии от 1100 до 1500 штыков.

Артиллерия слабая, но хорошо вооружена.

Между Трапезундом и Эрзерумом захвачены части 31-й дивизии действующая по направлению к Баязету.

11-й пех. дивизия — Штаб в Баязет.

Баязет — 18-й пех. полк.

Пашь 32-й пех. полк.

Баязет — Арм 33-й пех. полк.

Примечание: В полках группировавшихся на границе количество штыков редко превышает четверть.

### Иррегулярная часть.

Мордовская иррегулярная — 1200 человек.

Охлы — Батальон Эрзерумской жандармерии в количестве 350 чел.

Кь северу от Охлы — Бандя из 1500 человек.

Между Охлы и Трапезундом — (главным образом в Гасант-Кала)

— 1800 человек иррегулярной конницы.

В Трапезунде — Батальон жандармерии — 300 человек.

Примечание: В службах подвласти Трапезунда может находиться до 15.000 человек.

Врид. Начальника Разведывательного Отделения

Штаба Командующего Войсками.

Поручик по адмиралтейству *Обж. Ховь-Котурский*.

Помощник.

Подпоручик *Хазарбеков*.

Հետախուզական տեղեկություններ ՀՀ սահմանին խորհրդային, արքերջանական և բուրջական զորքերի տեղաբաշխման մասին

Գևոյանցը գրում է. «Երեւանում ստացայ այդ մարմնից (խմբից) առաջին ծրարը, վաւերական հեռագիրների պատճեններով, ծածկագիր, Էրզրումից Պոլիս Կարաբէքիր Քեազիմ փաշայի կողմից ուղարկած պատերազմական նախարարին: Ամփոփեցի եւ, տպագրելով, սեպտեմբերին խիստ գաղտնի ուղարկեցի իմ նախարարին, զօրամասերի պետերին եւ մի օրինակ էլ տուի կապ. Մ-ին՝ մեր սպայակոյտի «պետին»: Այդ հեռագիրները ցոյց էին տալիս, թէ ինչ դասաւորութեամբ, ինչ ուղղութեամբ եւ երբ թրքական ուժերը պետք է յարձակուէն Հայաստանի վրայ ու գրաւեն Կարսը, Օլթին, Սարիղամիշը, Արդահանը, Բզզիրը և այլն... Մաթեմատիկական ճշդութեամբ հետազային գործադրուեց այդ հեռագիրների բովանդակութիւնը Հայաստանի նկատմամբ»<sup>33</sup>:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ հայկական հետախուզության թուլության վկայությունն է այն, որ 1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի նախօրեին աղոտ պատկերացումներ կային թուրքական բանակի թվաքանակի, պլանների, առանցքային այլ հարցերի վերաբերյալ, և դրա արդյունքը եղավ ցավալի պարտությունն ու հանրապետության անկումը: Սակայն արխիվային փաստաթղթերը վկայում են, որ դա այդպես չէր: Հայկական հետախուզությունը ոչ միայն ձեռք էր բերել արժեքավոր տե-

ղեկություններ թշնամու նախապատրաստությունների վերաբերյալ, այլև որոշակի քայլեր ձեռնարկել թշնամական գործողություններին հակազդելու ուղղությամբ<sup>34</sup>:

Հայկական հետախուզության արդյունավետ աշխատանքի մասին հիշատակում է նաև Սիմոն Վրացյանը. «Հունիս ամսից սկսած, հայկական հետախուզությունը նկատում էր թուրքերի կողմից զինվորական շտապ պատրաստություններ Հայաստանի ուղղությամբ: «Թուրքահայաստան ուղարկված գործակալները, - կարդում ենք Հայաստանի Գլխավոր սպայակոյտի հունիսի 17-ի գաղտնի զեկուցագրի մեջ, - վկայում են թուրք կանոնավոր զորամասերի ներկայությունը Օլթիի և Սարիղամիշի ուղղությամբ և Ալաշկերտի շրջանում: Կատարելապես ստույգ կերպով հաստատված է, որ թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան-Զիվինում: Քարոզչությունը Թուրքիայի և Անդրկովկասի շրջանում ուժեղանում է: Այդ նպատակով մեծ քանակությամբ թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը և ամեն տեղ հայտնաբերվում են մեր վարչության ու հակահետախուզության կողմից»<sup>35</sup>:

Արխիվային հետաքրքիր տեղեկություններ կան նաև Պարսկաստանի ուղղությամբ իրականացված հետախուզա-

<sup>33</sup> Գեոյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», թ. 1. Բոստոն, 1945:

<sup>34</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-20 թթ., Երևան, 2009, էջ 43:

<sup>35</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 314:

կան աշխատանքների վերաբերյալ: 1920 թ. հուլիսի 6-ի հետախուզական ամփոփագրում հետախուզական բաժնի պետի պարտականությունները կատարող ծովակալության պորուչիկ Խան-Կոտուրսկին և նրա օգնական Դոդոխյանը փաստեր են բերում հայ-պարսկական առևտրական փոխհարաբերությունների, Մեդրիում տեղի ունեցած առևտրի, ինչպես նաև այն մասին, որ նախիջևանյան խաները և օրդուբադցիները բողոքել էին պարսկական սահմանապահներին, որ պարսիկները Ղափանի և Ջանգեզուրի հայերին զենք ու զինամթերք են մատակարարում: Այնուհետև նշվում է, որ պարսկական խաները ազգակցական կապեր ունեն Օրդուբադի ու Նախիջևանի խաների հետ, երկու ամսով դադարեցրել են առևտուրը, որի ընթացքում ադրբեջանական գործակալների կողմից Թավրիզում ծավալվել է հակահայկական քարոզչություն՝ հայերի ջարդ կազմակերպելու կոչերով: Սակայն Թավրիզի Մուշտիի միջամտության արդյունքում իրադրությունը որոշ չափով խաղաղեցվել է, և վերականգնվել են առևտրական հարաբերությունները Պարսկաստանի հետ<sup>36</sup>:

Թեպետ հետախուզական բաժանմունքի ամփոփագրերում տեղեկություններ կան Պարսկաստանի, Վրաստա-

<sup>36</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-20 թթ., Երևան, 2006, էջ 153:

նի, բոլշևիկյան Ռուսաստանի վերաբերյալ, սակայն բնական է, որ հայկական հետախուզության գլխավոր ուղղությունները Թուրքիան և Ադրբեջանն էին, ուստի ամփոփագրերի բովանդակությունը հիմնականում նվիրված է երկու պետությունների հետ հարաբերություններին, տարբեր ռազմական և քաղաքական բնույթի տարածաշրջանային գործընթացներին:

Հետախուզական աշխատանքները շարունակվել են մինչև հանրապետության անկումը: Ջարմանք ու հիացմունք է առաջացնում, որ այդքան փոքրաթիվ կազմով հնարավոր էր այդպիսի հսկայածավալ աշխատանքի իրականացումը:

НАЦИОНАЛЬНЫЙ АРХИВ РЕСПУБЛИКИ АЗЕРБАЙДЖАН  
Фонд 100  
Копия документа № 115  
1915 г.

Секретарь: *С. С. Сидоров*

Копия.

**ТРЕТИЙ - АЗЕРБАЙДЖАНСКИЙ ВОЙНЫ СОЮЗ.**  
/ Копия официального документа /.

Оборонительно-наступательный Военный Союз, заключенный между Императорским Османским Правительством и Азербайджанской Республикой 20-го октября 1915 года / 1915 г. / уполномоченными от Османского Правительства, Начальником Главного Генерального Штаба Генералом Демалье пашой со одной стороны и Азербайджанской Республикой И. ИСМАИЛОВЫМ - со другой.

Пункт 1-й. Между представителями Калифата, Османским Правительством и Азербайджанской Республикой, целью которых - достижение независимости принципиально приняты: в случае победоносной военной или иной силы на территориальную целостность означенных государств обе правительства обязуются взаимно поддерживать друг друга, согласно примечания А.

Пункт 2-й. Настоящее соглашение после учинения надлежащих поправок вступает в силу на течение одного года.

Пункт 3-й. В случае возникновения каких-либо прений на почве настоящего соглашения по военному вопросу между двумя Союзными Государствами Ислана, обращается рассмотрение сдвинутому примечанию А. Если одно из Союзных Государств подвергнется наступлению от другого, то оно обязуется немедленно оказать помощь и поддержку.

В. Военная помощь должна заключаться в следующем:  
1/ Когда одна из Союзных находится перед лицом опасности от каких-либо внешних Правительств.  
2/ Когда какое бы то ни было Государство испытывает внешнюю угрозу во внутреннем управлении путем вмешательства в гражданские, административные и финансовые дела, или же будет фактически достигнуто соглашение с другим Государством против нашего Союзника.  
3/ Когда два Государства находятся в какой-либо зависимости, следовательно, в зависимости соглашения от третьего Государства, следовательно, для выработки общего плана необходимой военной подготовки.  
4/ Настоящее соглашение, заключенное между Турцией и Азербайджаном, является основой для военного соглашения между Государствами, согласно примечанию А, следовательно, Османское Правительство подписывает мирный договор, если одна из этих государств составляет угрозу для другого.

115

1/ В случае, когда Ислам, непризнания Азербайджанской Республики и ее признания целостности Османской Империи, когда Государства эти будут находиться перед лицом опасности, тогда оба Союзных Государства обязуются подписать мир и на почве войны до тех пор, пока дело не будет явлено влиятельное соглашение и сдвинуто.

2/ Оба Союзных стороны обязуются не распространять настоящее военное соглашение, вверде до истечения 6-ти месяцев после окончания срока.

3/ По окончании срока настоящего соглашения, когда будет выяснена соответствующая граница, сдвигается в соответствии с 4-го примечания.

4/ В случае заключения мира и устроения границ до окончания настоящего соглашения вычеркиваются примечания А и Б, до истечения 3-х месяцев после окончания срока. В случае вторичного соглашения, примечания А и Б, сдвигаются вновь ввиду их важности.

5/ Османская Империя берет на организацию армии Азербайджанской Республики и по соглашению и одобрению Генеральных Штабов Союзных Государств подготовить для Азербайджанской Армии инструкторов, офицеров и сержантов. После окончания мира Османское Правительство принимает в свое распоряжение Азербайджанских офицеров для пополнения военных знаний.

6/ Пока Османская Империя находится в период заключения мира, не может помочь Союзнику военными снаряжением, после же заключения такого соглашения за снаряжения Азербайджанской армии оружием, винтовками и прочим вооружением.

10/ Азербайджанское Правительство обязуется не заключать какое-либо другое соглашение с третьими Государствами без ведома и одобрения Османского Правительства.

11/ В случае, когда обе стороны поочередно либо будут подписаны примечания Б, со стороны одной и не этой почит военными республика, для этого, для означенных недоработок назначается комиссия, из состава которой входить по два офицера Генерального Штаба для разбирательства. По окончании комиссии не будет иметь успеха, то выбирается 2 военных офицера Генерального Штаба из числа арбитров.

12/ Примечание В, относящееся к пункту А, подписано отдельно в Министерстве Обороны от Главного Генерального Штаба соответствующими уполномоченными от Османского правительства, в городе, Иерусалим, 20-го октября 1915 года / 1915 г. /, Османский уполномоченный и Начальник Главного Генерального Штаба, Исламский Республика и Азербайджанской Республики, следовательно, подписаны: Ахмед-паша, Начальник Главного Председателя Исламского

Թուրք-ադրբեջանական ռազմական դաշնագրի պատճենը

Ներկայացնենք ևս մեկ ուշագրավ փաստաթուղթ. Թիֆլիսում գտնվող հայ հետախույզներին հաջողվել էր պարզել ադրբեջանական, խորհրդային և թուրքական զորքերի տեղաբաշխումը Հայաստանի սահմանների շուրջ: Գլխավոր շտաբի պետին հասցեագրված Քիշմիշյանի՝ 1920 թ. հունիսի 23-ի հեռագրով տեղեկացվում էր խորհրդային զորքերի տեղաբաշխման մասին Կովկասում: Հայտնվում էր, որ խորհրդային զորքերի կազմում Ադրբեջանում գտնվում են 11-րդ բանակը և 4 զրահագնացքներ, իսկ ընդհանուր առմամբ ռուսական զորքերի թիվը Ադրբեջանում հաշվվում էր 18-20 հազար սվին, 3000-3500 թուր, 120-160 զնդացիր, 36 թնդանոթ և այլն<sup>37</sup>: Նույն փաստաթղթում կարևոր տեղեկություններ կան նաև թուրքական զորքերի տեղաբաշխման ու թվաքանակի վերաբերյալ: Այս փաստաթուղթը ևս մի ապացույց է, որ թուրք-հայկական պատերազմում հայերի պարտության մեջ գուցեև հետախույզությունն ուներ մեղքի որոշ բաժին, բայց ոչ ամբողջական, քանի որ հենց պատերազմի նախօրյակին ստացված հետախույզական տվյալները ուղղակիորեն մատնանշում էին ՀՀ դեմ նախապատրաստվող ագրեսիան, և այդ տեղեկություններին պետք էր համարժեք մոտեցում ցուցաբերել:

Հայկական հետախույզական ծառայությունների գործունեության պատմության արժանահիշատակ էջերից է

նաև «Անտոն Մարոկուտտիի գործը»: 1919 թ. դեկտեմբերի 19-ին, հենվելով ՀՀ նախարարների խորհրդի հուլիսի 29-ի որոշման և զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հուլիսի 26-ի հրամանի վրա, Երևանում զինվորական դատարանում լավեց ավստրիական ծառայության նախկին սպա, այն պահին վրացահպատակ Ա. Մարոկուտտիի մեղադրանքի մասին գործը, որին դատում էին Քրեական օրենսգրքի 119-րդ և 198-րդ հոդվածների համաձայն: Գործի կապակցությամբ փաստաթղթերից տեղեկանում ենք, որ որպես վկաներ հանդես են եկել Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար, հայկական հետախույզական ծառայության ղեկավարներից Վահագն Մուրադյանը, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը և արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի վարիչ Պ. Յակուլովը:

Իսկ ամեն ինչ սկսվել էր նրանից, որ 1919 թ. դեկտեմբերի 8-ին Ներքին գործերի նախարարության աշխատակիցների կողմից հայտնաբերվեց Թիֆլիսից եկած մի հեռագիր, որի հեղինակը Վրաստանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Վեքիլովն էր, որը Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի տեղակալ իր գործընկերոջից՝ Հախվերդովից խնդրում էր աջակցություն ցուցաբերել Անտոն Մարոկուտտիին՝ Երևան մեկնելու կապակցությամբ («Մոտ

<sup>37</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-200, ց. 1, գ. 441, թ. 74:

օրերին Երևան է մեկնում ավստրիական կապիտան հրե-  
տանավոր Ա. Մարոկուտտին: Նա մտադիր է անցնել Խա-  
լի-բեյի բանակ: Յույց տվեք նրան աջակցություն, եթե  
հարկ լինի»<sup>38</sup>:

Изъ Тифлиса  
№ 829  
5 XII 5 - Ю

175  
Софетно.  
Э Р И В А Н Ъ  
Дипломатическому Представителю  
Азербейджана А х в е р д о в у


На днях выжаетъ въ Эривань австрійскій Капитанъ  
артиллеріи Антонъ Морокути точка Онъ намѣренъ пробрать-  
ся въ армію Халилъ бей точка Окажите ему содѣйствіе ес-  
ли найдете нужнымъ № 120

Замѣститель Дипломатическаго Представителя  
В е к и л о в ъ

Հեռագիր Երևանում Ադրբեջանի դիվանագիտական  
ներկայացուցչին՝ Ա. Մարոկուտտիի ժամանելու մասին

<sup>38</sup> ՀԱԱ, ֆ. Գ. – 200, ց. 1, գ. 212, էջ 175:

162  
ДѢЛО АНТОНА МОРОКУТИ.  
19-го декабря 1919 г. въ г. Эривани въ Военномъ Судѣ слу-  
шалось дѣло по обвиненію бывшаго офицера австрійской службы,  
иняъ грузіянскаго подданнаго, Антона Морокути, обвиняемаго по 108,  
119-ст. Угол. Улож.  
Это исключительное дѣло собрало въ залъ засѣданія Суда,  
въ зданіи Эриванской Городской Думы массу публики, состоящей  
изъ членовъ парламента, общественныхъ дѣятелей, военныхъ и др.  
Засѣданіе началось около 10 1/4 часовъ утра. Явилъ  
Спросъ подсудимаго.  
На вопросы предсѣдателя подсудимый отвѣчаетъ, что ему 32 го-  
да, что онъ житель Южной Сткрія, гор. Целли, имѣющей Нго-  
Славін.  
Свидѣтели.  
По дѣлу были вызваны три свидѣтели: 1/ Капитанъ Мурадизъ,  
вр. и.д. Начальника Генеральнаго Штаба, 2/ Генеральный Секретарь  
Министерства Иностранннхъ Дѣлъ А. Теръ-Акопянъ и 3/ Замѣдывающій  
Политическимъ Отдѣломъ Министерства Иностраннхъ Дѣлъ И. Якуловъ.  
Обвинительный Актъ.  
Оглашенный обвинительный актъ гласитъ слѣдующее:  
1919 года декабря 6-го дня, въ гор. Эривани, въ войсковомъ  
раіонѣ театра военныхъ дѣйствій, Министерствомъ Внутреннихъ Дѣлъ  
была перехвачена шифрованная телеграмма изъ Тифлиса отъ Замѣ-  
стителя Дипломатическаго представителя Азербейджанской Республики  
въ Грузіи на имя таково же представителя той же республики въ  
Арменіи отъ 5-го сего декабря за № 120. По расшифрованіи теле-  
граммы эта оказалась слѣдующаго содержанія: " На дняхъ выжаетъ  
въ Эривань австрійскій Капитанъ артиллеріи Антонъ Морокути  
точка Онъ намѣренъ пробраться армію Халилъ бей точка Окажите  
ему содѣйствіе, если найдете нужнымъ № 120:" Копія этой теле-  
граммы Министерствомъ Внутреннихъ Дѣлъ тотчасъ же была сообщена  
въ Министерство Иностраннхъ Дѣлъ, которое приняло соответству-  
ющія мѣры къ задержанію упомянутого въ телеграммѣ Морокути и  
послѣдній былъ действительно задержанъ членомъ резерва милиціи



Ա. Մարոկուտտիի վերաբերյալ քրեական գործի նյութերից, 1919թ.

Մարոկուտտին ձերբակալվեց Երևան-Ալեքսանդրապոլ գնացքում, նրա մոտ հայտնաբերվեց 7.000 ռուբլի նիկոլակյան փող, Շարուրի և Նախիջևանի շրջաններին վերաբերող քարտեզներ, վրացական անձնագիր: Դատարանում Մարոկուտտին համառորեն ժխտում է իրեն ներկայացված մեղադրանքները, պնդելով, որ ինքը ճամփորդում է, իսկ տեղագրական քարտեզները պարզապես աշխարհագրական բնույթի են, իր կողմից վերցվել են տեղանքում կողմնորոշվելու համար: Հայտնում է, որ իր ուղևորության նպատակը առևտրական գործերով Թավրիզ հասնելն է, չի ժխտում, որ

իրը Նախիջևանի վրայով Պարսկաստան մեկնելու մտադրությունը իրականացնելու համար ինքը դիմել է ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչությանը՝ աջակցության խնդրանքով, միաժամանակ ավելացնելով, որ ինքը տեղյակ չէ, թե ինչ է կատարվում Նախիջևանում, ով է Խալիլ-բեյը և ինչ հակահայկական գործողություններ է նա կատարում:

Սակայն այս կարգի փաստարկները չեն ազատում Մարոկուտտիին Հայաստանի դեմ կատարված լրտեսական գործունեության մեղադրանքից: Մեղադրող կողմում հանդես եկող կապիտան Մուրադյանն իր ելույթում նշում է, որ իրեն, որպես հատուկ ծառայության աշխատակցի, հավաստի հայտնի է, որ Ադրբեջանը բազմիցս Նախիջևան է ուղարկել իր հրահանգիչներին՝ տեղական մահմեդական բնակչության կազմակերպման համար ծախսելով երեք միլիոն ռուբլի:

1919 թ. դեկտեմբերի 14-ին Զինվորական դատարանի Հատուկ ատյանը Ա. Մարոկուտտիին մեղավոր է ճանաչում հակառակորդի՝ Հայաստանի դեմ ձեռնարկած գործողություններին նպաստելու և օժանդակելու մեջ և որոշում կայացնում Մարոկուտտիին զրկել բոլոր իրավունքներից և դատապարտել տաժանակիր աշխատանքի՝ 15 տարի ժամկետով: Սակայն հետագայում բազմաթիվ միջնորդությունների և Ա. Մարոկուտտիի՝ Հայաստանի կառավարությանը

ուղղված ներում շնորհելու խնդրանքով դիմումի հիման վրա գործը կարճվում է, և Մարկուտտին պարզապես վտարվում է Հայաստանի սահմաններից<sup>39</sup>:

Մարկուտտիի գործի հետ անմիջական եզրեր ունի նաև Հայաստանի զինվորական գլխավոր հայթաթիչ գրասենյակի նախկին վարիչ Իվան Տարականովի գործը, որը մեղադրվում էր պետական դավաճանության և զինվորական գաղտնիքները թշնամուն հայտնելու մեջ: Մարկուտտիի մոտ կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերվել էր Տարականովի անունով մի նամակ՝ գրված թիֆլիսաբնակ սերբուհի տիկին Իռանովիչի կողմից:


Որոշակի կասկածանքների հիման վրա Տարականովը ենթարկվում է խուզարկության, որի արդյունքում նրա մոտ հայտնաբերվում են գաղտնի հեռագրերի ծածկատառեր և նամակներ: Թեև Տարականովը փորձում է ժխտել ներկայացված մեղադրանքները, սակայն դատարանի վճռով նա ճանաչվում է մեղավոր հանցավոր դավաճանության ու կառավարության գաղտնիքները թշնամուն հայտնելու մտադրության մեջ և դատապարտվում 10 տարվա տաժանակիր աշխատանքի՝ զրկվելով բոլոր իրավունքներից և կոչումներից<sup>40</sup>:

Վերոհիշյալ փաստերն ապացուցում են, որ, չնայած ծանր պայմաններին, Հայաստանի հատուկ ծառայությունները



«Հառաջ» օրաթերթում տպագրված նյութը սպա Տարականովի դատավարության մասին, 1920 թ.

ըը մեծ ճիգեր էին գործադրում ազգային-պետական անվտանգության ապահովման ուղղությամբ:



Ցավոք, Հայաստանի քաղաքական ու կուսակցական ղեկավար շրջաններն ավելի շատ առաջնորդվում էին մեծ տերությունների շահերին հարմարվելու նկատառումով, երբեմն հարկ եղած ուշադրությամբ չէին վերաբերվում ստացված հետախուզական տեղեկույթին, որի արդյունքում երկիրը չկարողացավ արդյունավետորեն հակազդել թուրքական ագրեսիային և պատնեշ ստեղծել նրա զավթողական պլանների դեմ:

<sup>39</sup> ՀԱԱ, Ֆ.Պ.-276, ց.1, գ.196, ք. 131, 165, 167, 170, 172, 173, 174, 177:

<sup>40</sup> «Յառաջ», 9 մարտի, 1920, N 2:

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԵՏԱԽՈՒԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԳՈՒԹՅԱՆ  
ԿԱԴՐԵՐԸ**

Կադրային հիմնախնդիրը հատուկ ծառայությունների արդյունավետ գործունեության անկյունաքարն է, որով պայմանավորված է բոլոր ձեռնարկվող գործողությունների թե՛ հաջողությունը, թե՛ ձախողումը:

Նորաստեղծ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների համար կադրային և նյութատեխնիկական ապահովվածության խնդիրներն ամենախոցելին էին, քանի որ այդ ուղղությամբ աշխատանքի փորձ գրեթե չկար: Այդ դժվարին գործն իրենց ուսերին վերցրին մարտական ուղիներում թրծված մի խումբ հայ զինվորականներ:


Առաջին Հանրապետության ուժային կառույցների և հատուկ ծառայությունների ակտիվ կազմակերպիչների մեջ քիչ չէին նաև այլազգիները, մասնավորապես ցարական բանակի կադրային սպաները, որոնք Ռուսաստանի խորհրդայնացումից հետո չցանկացան ծառայել բոլշևիկյան իշխանությանը և մնացին Կովկասում (գնդապետ Միխայիլ Զինկեևիչ, փոխգնդապետներ Ալեքսանդր Շենուր, Վլադիմիր Պրիտոմանով, կապիտաններ Նիկոլայ Շումով, Միխայիլ Սեդվեդև և այլն):

Հատկանշական է, որ ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը սկզբնավորման օրից մինչև 1919 թ. սեպտեմբերը ղեկավարել է *Ալեքսանդր Շենուրը*: Նա ծնվել

է 1884 թ. Սանկտ-Պետերբուրգում, ծագումով գերմանացի՝ Էլզաս-Լոթարինգիայից: Սովորել է տեղի համալսարանի բնագիտական ֆակուլտետում, ապա Միխայլովյան հրետանային ուսումնարանում, Կիևի ավիացիոն դպրոցում և Գլխավոր շտաբի Նիկոլայան ակադեմիայի արագացված կուրսերում: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին:

1918 թ. մայիսյան հերոսական օրերին հայկական զորքերի Սարդարապատի խմբի շտաբի պետն էր, հերոսամարտի մասին հրատարակել է բարձրարժեք հուշեր «Սարդարապատի հերոսամարտը, գրեց Գլխավոր Սպայակույտի գնդապետ Ալեքսանդր Կ. Շենուրը»: 1918 թ. օգոստոսին զորահրամանատար Մ. Սիլիկյանի հրամանով նշանակվել է դիվիզիայի շտաբի՝ հանձնարարությունների գծով սպա: Զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 5-ի հրամանով փոխգնդապետ Ա. Շենուրը ստացել է հատուկ նշանակում՝ համարվելով մշտական զործուղման մեջ: Որպես բարձրաստիճան կադրային սպա բազմիցս կատարել է ամենադժվարին հանձնարարություններ՝ գտնվելով զինվորական և հետախուզական ծառայությունների վերին էշելոնում: Հաճախակի փոխարինել է Գլխավոր շտաբի պետ Զինկևիչին: 1919 թ. վերջին Ա. Շենուրը մեկնել է Ռուսաստան և մի որոշ ժամանակ Կամավորական բանակի կազմում մասնակցել քաղաքացիական պատերազմին: Այնուհետև արտագաղթել է Բուլղարիա, հետագայում ապրել

Ֆրանսիայում, Թունիսում: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է ԱՄՆ-ում, որտեղ էլ մահացել է 1977 թվականին:



Ալեքսանդր Շենուր

Հայկական հատուկ ծառայությունների նվիրյալներից շատերի անունները մնացել են պատմության ծալքերում և մոռացության են մատնվել: Յավոք, շատերի անուններն էլ մեզ հասել են արդեն խորհրդային տարիներին նրանց նկատմամբ հարուցված քրեական գործերի նյութերից: 1927 թ. հոկտեմբերին Անդրկովկասի ժողկոմխորհին կից պետքաղվարչության դատական կոլեգիայի նիստի որոշմամբ ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի նախկին պետ կապիտան Վահագն Մուրադյանը, նույն բաժանմունքի վերջին պետ պորուչիկ Միքայել Դոդոխյանը, հատուկ հանձնարարությունների գծով հակահետախուզության աշխատակից, արտաքին դի-

տարկման պատասխանատու պորուչիկ Գրիգորի Խաչատրյանը, հակահետախուզության աշխատակից Գրիգորի Երանովը դատապարտվեցին տասը տարվա բանտարկության:

Որքան էլ շինծու են հիշյալ գործի նյութերը, այնուհանդերձ ժամանակակիցներիս սեփականությունն են դարձնում արժեքավոր փաստագրություն Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության և, մասնավորապես, կադրերի վերաբերյալ:

**Վահագն Գալուստի Մուրադյանը** ծնվել է 1896 թ.: Ավարտել է Կարսի ուսումնարանը և փորձել շարունակել ուսումը Պետրովսկ-Ռազումովյան գյուղատնտեսական ուսումնարանում, սակայն առաջին աշխարհամարտի սկսվելուն պես ընդունվել է ռազմական ուսումնարանի արագացված կուրսերն ու որպես ենթասպա գործուղվել Կովկասյան ճակատ: Ցարական բանակի քայքայումից հետո մնացել է հայկական զորամասում և զբաղեցրել հրամանատարական պաշտոններ:

1919 թ. ապրիլին ՀՀ ռազմական նախարարի կողմից նշանակվել է Առանձին միլիցիոն բրիգադի շտաբի պետի պաշտոնակատար, ապա զորահավաքի և դասալքության դեմ պայքարի գծով կոմիսար: Մի քանի ամիս անց նոր նշանակում է ստացել՝ սկզբում որպես Գլխավոր շտաբի հետախուզության ու հակահետախուզության բաժանմունքի

պետ, ապա՝ Գլխավոր շտաբի պետ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նշանակվել է Գլխավոր շտաբի պետին առընթեր հանձնարարությունների գծով աշխատակից:

КР. С. С. Р.  
ГОСУДАРСТВЕННОЕ ПОЛИТИЧЕСКОЕ УПРАВЛЕНИЕ КРЫМА

# ДЕЛО

(регистрационного отдела) № 457  
№ 634

По обвин. Додокян  
Михаил Ничимович

Вещ. док. № \_\_\_\_\_

Начато Июня 9 8 дня 1927 г.  
Окончено Июля 9 дня 1927 г.  
На листах 11

Дано в архив  
за № \_\_\_\_\_

Выдано из архива № 25 от 1 июля 1928 г.  
Г. В. О. Офиц. Политическое Управление Крымской Республики, отдел регистрации дел, архивная часть. Подпись: Офиц. В. В. О.

В и п и с к а  
на протокола допроса обвин. Михаил Ваага Галустанца  
от 1 Августа 1927 года.

2) Где производились следствия и какое участие принимали в них Додокян и Качатуров.  
Следствия производились только в помещении Гештаба, в помещении разведывательного отделения, которое несколько раз было занято две комнаты. Додокян как я делалый застал застрел икон Разведывательного Отдела и временно выполнял поручения по кон-тр-Разведконт. Отд. Поручения эти преимущественно заключались в опросе тех или иных лиц и составлении протоколов следствия. Качатуров был поставлен на службу в кон-тр-Разведконт. Роль как описательно, так и по существу была выделена в отчете (на-колько помню) наружного наблюдения за теми или иными лицами. В непосредственно связи он находился с инког-Котурским, все поручения которого должен был исполнять. Качатуров насколько помню был малообразованным и выполнял роль ведомого сотрудника, не имея каких-либо специальных сведений.

В. Мурадян.

В о в о:

на трестовом допросе об этом. Миссия Грегориуса Исакянвича.

Роль Мурадьяна в Развед. Отделении.

49

В 1919г., приблизительно в августе-сентябре Мурадьян был назначен на Развед. Отд. Штаба, до этого Мурадьян я совершенно не знал. С приходом в Отделение Мурадьяном ничего особенно не изменилось, разве только благодаря скрытности, все поступающие сведения на Турини и др. приходил в тайне от почти всех сотрудников, сам же по ночам долгие часы у себя в кабинете и дал какие-то доклады и проч. В продолжение этого времени очень часто Мурадьян заходил в штаб Штаба не по долгу 1-2-3 дня. Во время назначения в штаб Штаба занимался в кабинете штаба Штаба, одновременно руководил работой отделения. Во время назначения Мурадьяном не было ни одного обхода, было несколько арестов мусульман, армянских тайно и военных сил, которые подорвались в военных шпионские. С приходом в Армени Тиграна Девоняна из Турини Мурадьян был назначен на Штаба, а отделение передал Девоняну. После ликвидации Генштаба Мурадьян поступил на курсы офицеров генерального штаба. До советизации Армени Мурадьян был на курсах. После советизации декабря 20г., я Мурадьяна больше не встречал до осени 21г. когда это встречал в Тавриз Секретарем В штаба, где мне рассказывал, что после советизации уехал в Векандином Александром (ныне Каркандутор) в Моску и что с ним он приехал в Тавриз а службу. Рассказывал, что на казачьих инструкторов в Тавриз и всех их сильно ругал, как тех, с которыми он в Армени был в хороших отношениях. Говорил, что искренно сочувствует Советской власти и что пока он не в партии, но ясно, что работает в этом направлении (подготовкой) и должен поступить в партию. Разговор этот происходил у него на квартире за вечерним чаем, куда он меня пригласил. В разговорах ни разу не говорили ни о разведке, ни о контр-разведке, так как это отделение занималось исключительно военным шпионжем, а контр-разведка анклаиванием иностранных военных шпионов на территории Армени и никогда политическими делами не занималось и следовательно не рассматривали это учреждение как антисоветское. Мурадьян получал мало-мальке налетов 140 туманов, жил очень замкнуто, у него изредка бывал бывш. дашн. офицер Степан Джалалов, как-то больше никого из офицеров не принимал. Первое время пребывание бывал с остальными сотрудниками Штаба, но как говорили начал заискивать и бывал со

Վ.Մուրադյանի, Մ.Գողոխյանի և մյուսների նկատմամբ Գրիմի ՊԲՎ կողմից հարուցված քրեական գործի նյութերից, 1927 թ.

Այնուհետև, որպես Անդրկովկասի ռազմաքաղաքական իրադարձություններին լավատեղյակ սպա, տեղափոխվել է արտգործնախարարություն և ձեռնամուխ եղել թուրքերի հետ կայանալիք կոնֆերանսի նյութերի նախապատրաստմանը: 1921 թ. օգոստոսին գործուղվել է Թավրիզ որպես մաքսային գրասենյակի քարտուղար, որտեղ մնացել է մինչև 1925 թվականը: 1922 թվականին Վ. Մուրադյանն ընդունվել է Կոմունիստական կուսակցության

շարքերը, որից հետո ընտրվել է տեղկոմի քարտուղար, այնուհետև սովակուների և «Տրուդ» կոոպերատիվի անդամկազմակերպիչ: Նրա բնակարանն օգտագործվել է որպես գործակալների հանդիպատեղի: 1926 թվականին Անդրերկրկոմի որոշմամբ նշանակվել է «Անդրպետառ»-ի լիազոր-ներկայացուցիչ Պարսկաստանում:

1927 թ. Վ. Մուրադյանը ձերբակալվել է և շինծու մեղադրանքով դատապարտվել տասը տարվա ազատազրկման: Հետագա ճակատագիրն անհայտ է:

Պորուչիկ *Միքայել Գողոխյանը* ծնվել է 1895 թ., եղել է հոգևոր սեմինարիայի սան: Վարելով Հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնը՝ հմտորեն իրականացրել է նաև հակահետախուզական աշխատանք՝ հակահետախուզության պետ Խան-Կոտուրսկու հետ սերտ համագործակցությամբ: Մինչև բաժանմունքի պետ դառնալը հաճախակի գործուղվել է Հայաստանի տարբեր թեժ կետեր:

Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ թաքնվել է Գրիմում, ապա տեղավորվել քաղաքացիական աշխատանքի ֆինանսների ժողկոմատում:

1927 թ. ձերբակալվել է և շինծու մեղադրանքով դատապարտվել տասը տարվա ազատազրկման: Հետագա ճակատագիրն անհայտ է:

Հետաքրքրական են նաև Գրիգորի Խաչատրյանի և Ստեփան Երամովի կերպարները: Երամովը գրադիում էր

արտաքին դիտարկմամբ և աշխատել է Խան-Կոտուրսկու անմիջական ղեկավարությամբ: Իրեն դրսևորել է որպես ակտիվ, նախաձեռնող աշխատակից, որի համար ստացել է պաշտոնի բարձրացում՝ նշանակվելով դիտարկման գծով ավագ աշխատակից: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է Կարմիր բանակի շարքերը, իսկ հետո որոշ ժամանակ աշխատել Թիֆլիսում և Բաքվում:

Գ. Խաչատրյանը Վահագն Մուրադյանի մերձավոր զինակիցն էր, հայկական հետախուզությունում աշխատում էր նրա սկզբնավորման օրից՝ զնդապետ Շենուրի հանձնարարական-երաշխավորագրի հիման վրա: Սկզբնական շրջանում կատարում էր հակահետախուզությանն առընթեր հանձնարարությունների գծով աշխատակցի պարտականությունները, իսկ հետո նրան հանձնարարվում է իրագեկումը և արտաքին դիտարկումների խումբը: Աշխատել է մինչև հանրապետության խորհրդայնացումը, այնուհետև տեղափոխվել է Պարսկաստան: Երկու տարի անց վերադարձել է՝ փորձելով հաստատվել հայրենիքում: Սակայն շուտով ձերբակալվել է և հիշատակված քրեական գործով Երանովի ու մյուսների հետ միասին դատապարտվել տասը տարվա ազատազրկման:

Հայկական հետախուզության պատմության մեջ անուրանալի դեր ու մեծ վաստակ ունի *Տիգրան Թադևոսի Դևոյանը*:

Ծնվել է Երևանում: Հայտնի է, որ 1903 թ. նա ռուսական միջնակարգ դպրոցի սան էր: Ուսումնառության տարիներին մասնակցել է ցարական իշխանություննե-





Տիգրան Դևոյան

րի կողմից հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու և հայկական դպրոցները փակելու դեմ սկսված աշակերտական հուզումներին և այդ պատճառով հեռացվել է դպրոցի երրորդ դասարանից ու փախել Թիֆլիս:

1906 թ. ընդունվել է Երևանի գիմնազիայի 8-րդ դասարանը և, հաջողությամբ հանձնելով քննությունները, ավարտել այն: Որոշ ժամանակ անց Դևոյանցն ընդունվել է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարագիտական բաժինը:

Ռեակցիայի ժամանակաշրջանում (1907-1912 թթ.) բանտարկվել է, սակայն որոշ ժամանակ անց ազատ է արձակվել ու մեկնել Երևան: Այնուհետև կրկին ձերբակալվել է: 1910 թ. փախել է բանտից և ուղևորվել Թավրիզ, որտեղ դասավանդել է «Հայոց Կեդրոնական դպրոցում»:



Գրություն Տ. Դևոյանցին Արևմտյան Հայաստանի քաղաքները գործուղելու մասին, 1919 թ.

1913 թ. գարնանը Տ. Դևոյանցը ստանձնել է Օրդու քաղաքի ազգային երկու դպրոցների տնօրինությունը: Առաջին աշխարհամարտի ժամանակ Իգդիրում ստեղծվել էր Հայկական սպայակույտ, որտեղ Տ. Դևոյանցը ռուսական

Չորրորդ կորպուսի սպայակույտի հետ հարաբերությունների ապահովման պատասխանատուն էր:

Տ. Դևոյանցի կենսագրության մեջ հատուկ տեղ է զբաղեցնում 1915 թ. ապրիլ-մայիս ժամանակահատվածը, երբ նա իր 5 զինակիցներով հայտնվել է Մանազկերտում՝ Մուշի և Բիթլիսի միջև կապ հաստատելու նպատակով: Այնուհետև Կովկասյան բանակի հրամանատարության կողմից գործուղվել է Էրզրում՝ հետախուզական աշխատանքների կատարման նպատակով, իսկ արդեն Երզնկան գրավելուց հետո հիմնավորվել է այնտեղ: Ցարական բանակին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Մուրբ Աննայի» շքանշանով:

Դևոյանցի անմիջական մասնակցությամբ Էրզրումում ձերբակալվել են վեց թուրք ղեկավարներ, որոնք մեղադրվել են հայկական կոտորածների կազմակերպման մեջ և զինվորական դատարանի վճռով ենթարկվել մահապատժի:

Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումից հետո որպես փորձառու հետախույզ մասնակցել է հետախուզական ծառայության ձևավորման բարդ գործին՝ դառնալով Ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը:

1918 թ. մայիսին Վրաստանի Սամտրեդիա կայսրա-նում ձերբակալվել է տեղի հատուկ ծառայությունների կող-

մից՝ լրտեսության մեղադրանքով: Բանտ տանելու ճանապարհին նա հասցրել է ոչնչացնել մի շարք կարևոր ծածկագրված փաստաթղթեր: Մետեխի բանտում հիվանդացել է բժավոր տիֆով և ազատվել մահապատժից: Ի վերջո, նրան հաջողվել է փախչել բանտից և վերադառնալ Երևան: «...Իմ Երևան հասնելուս միջոցին Եւանգուլյանը (ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում-հեղ.) արդէն բաց էր թողել հետեւեալ հեռագիրը՝ «Կովկասեան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ՝ կապիտան Դեոյանցը, որը մեղադրուում էր լրտեսության մէջ, յաջող կերպով փախչելով Մեդեխի բանտից, հասաւ Երեւան եւ նշանակուեց Հայաստանի բանակի հետախուզական եւ հակահետախուզական բաժնի պետի պաշտօնին»: ...Երեւան հասնելուս պէս, ինձ կանչեց իր մօտ մեր պատերազմական նախարար զօր. Արարատեանը, որին ներկայացայ ալիւրի տոպրակից կարած բլուզով: Այնտեղ էր նաև զօր. Կ., Հայաստանի զինվորական կցորդը Վրաստանում: Նա հանեց վրայի սուրը, համբուրեց ինձ և յանձնեց իբր նուէր՝», - գրում է Դեոյանցն իր հուշերում<sup>41</sup>:

1919 թ. մայիսին ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի կողմից Ս. Դեոյանցը գործուղվում է Էրզրում, Մուշ, Վան և Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքներ: Ուղևորության վերջնականպատակը Կ.Պոլիս հասնելն էր

<sup>41</sup> Դեոյեանց Ս., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, N 1 (246), յուն.-փետ., էջ 60:

ու այնտեղ հետախուզական գործի կազմակերպումը: 1920 թ. սկզբին նա հայտնվում է Կ.Պոլսում, որտեղ կազմակերպում է հետախուզական խումբ: Չնայած ֆինանսական մեծ դժվարություններին՝ պատվով կատարում է իր առջև դրված խնդիրները, կարողանում կապեր հաստատել օտարերկրյա մի շարք հետախույզների հետ և արժեքավոր տեղեկություններ ուղարկել Հայաստան՝ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների, թուրքական զինուժի թվաքանակի և նախապատրաստությունների, ինչպես նաև հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաբաշխման մասին<sup>42</sup>:

Հատկանշական է, որ Դեոյանցը շատ էր կարևորում տեղեկատվության ճիշտ գնահատումը և նպատակային օգտագործումը. «Կարեւոր լուրերի առաքումը միայն այն ժամանակ արժէք կունենայ, երբ այդ լուրերը լաւ կը դասաւորուին եւ օգտակար կը դարձին նրանց, որոնք կազմում են պետութեան աչքերն ու ականջները», - գրում էր նա<sup>43</sup>:


Կյանքի վերջին շրջանում Տիգրան Դեոյանցը հանգրվանել էր ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում և այնտեղ հրապարակել բարձրարժեք հուշագրություն՝ «Կեանքիս դրուագներից» վերտառությամբ:

<sup>42</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Երևան, 2009, էջ 22:

<sup>43</sup> Դեոյեանց Ս., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, N 1(246), յուն.-փետ., էջ 61:

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության սկզբնավորողներից իր անգնահատելի դերն է ունեցել Հովհան Խան-Կոտուրսկին՝ Արտեմի Նիկիտայի Հովհաննիսյանը, որի կենսագրական տվյալները, ցավոք, կցկտուր են:

ՀՀ զինվորական նախարարի 1918 թ. օգոստոսի 7-ի հրամանում նշվում է, որ Ռուսիանական ռազմաճակատի գորակայանին կից Սևծովյան նավատորմի հրամանատարի շտաբի հետախուզական բաժնի նախկին պետ, ծովակալության գծով պորուչիկ Խան-Կոտուրսկին գործուղվում է Գլխավոր շտաբ<sup>44</sup>: Այստեղ նա շատ շուտով աչքի է ընկնում իր հմուտ մասնագիտական գործունեությամբ՝ Երևանից



Հրաման Հովհան Խան-Կոտուրսկուն ՀՀ ռազմական նախարարության Գլխավոր շտաբ գործուղելու մասին, 1918 թ.

<sup>44</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-204, ց.1, գ. 40, ք. 51, գ. 131, ք. 24:

հաճախ գործուղվելով ամենաթեժ կետերը:

Խան-Կոտուրսկու գործունեության լավագույն էջերից է հետախուզական ուղևորությունը Արդահան, Լազիստան և Սև ծովի անատոլիական ափամերձ գոտի, որի մասին նա թողել է ուշագրավ տեղեկատվական ամփոփագրեր տարածաշրջանում ընդհանուր իրավիճակի, ինչպես նաև Երզնկայում, Էրզրումում և Բայբուրդում թուրքական զորքերի տեղաբաշխման վերաբերյալ:

Մեզ են հասել հետախուզական ու հակահետախուզական ոլորտի բազմաթիվ արժեքավոր արխիվային փաստաթղթեր Խան-Կոտուրսկու ստորագրությամբ, որոնք վկայում են վերջինիս արգասաբեր գործունեության և հատուկ ծառայությունների կայացման գործում մեծագույն վաստակի մասին:



Հայաստանի Առաջին Հանրապետության ծննդի անմիջական ակնատեսը և նոր պետության ուժային կառույցների ակտիվ կազմակերպիչներից էր ռուսական բանակի կադրային սպա, գնդապետ **Միխայիլ Միխայիլի Ջինկևիչը**: Ծնվել է 1883 թվականին,



Միխայիլ Ջինկևիչ

ավարտել է Կիևի Վլադիմիրյան կադետական կորպուսը և Կոնստանտինովյան հրետանային ուսումնարանը, հետագայում՝ Նիկոլաևյան կայսերական ռազմական ակադեմիան: Մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին: Առաջին աշխարհամարտի տարիներին գործուղվել է Կովկասյան ճակատ, որպես Միբիրյան կազակական բրիգադի շտաբի պետ:

ՀՀ զինվորական նախարարի 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով Հայկական դիվիզիայի շտաբի պետ Մ. Ջինկևիչը նշանակվել է Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար<sup>45</sup>: Որպես ռազմահետախուզական գործի հմուտ մասնագետ՝ նա իր շուրջը հավաքեց կադրեր, որոնք անձնվեր գործունեություն ծավալեցին հայկական հատուկ ծառայությունների կայացման գործում:

<sup>45</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-200, ց.1, գ. 131, թ. 24:

Գեներալ-մայոր Ջինկևիչը Հայաստանի կառավարության կողմից բազմիցս արժանացել է շնորհակալագրերի իր պարտականությունների անթերի կատարման համար: Չնսեմացնելով նրա դերը հայկական հատուկ ծառայությունների կայացման գործում՝ միաժամանակ պետք է նշել, որ Ջինկևիչը նաև Դեմիկիևի Կամավորական բանակի ներկայացուցիչն էր Հայաստանում, և կա տեսակետ, որ նրա առջև խնդիր էր դրված տարաբնույթ խնդիրների լուծման նպատակով հավաքագրել Հայաստանում ապրող ռուսական բանակի սպաներին և հայկական ղեկավար շրջաններին տրամադրել Դեմիկիևի բանակի հետ համատեղ պայքարելու բոլշևիզմի վտանգի դեմ:



Հայաստանից հեռանալուց հետո բոլշևիկների դեմ մարտնչել է Կամավորական բանակի շարքերում, ապա արտագաղթել է Բուլղարիա: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ընդգրկվել է Ռուսական կորպուսի կազմում և զոհվել Հարավսլավիայում 1944 թվականին:

Հայաստանի Առաջին Հանրապետության բանակաշինության ու հատուկ ծառայությունների կայացման գործընթացին ակտիվորեն մասնակցել է ռուսական բանակի գեներալ-մայոր **Գաբրիել Ղորղանյանը**: Ծնվել է 1888 թ., մասնակցություն է ունեցել Առաջին աշխարհամարտին Կովկասյան ռազմաճակատում: Մասնակցել է Ղարաբաղի սայի ճակատամարտին:



Գաբրիել Ղորղանյան

Հայաստանի անկախության հռչակումից սկսած՝ Գ. Ղորղանյանը ներգրավվել է դիվանագիտական աշխատանքներում որպես ռազմական խորհրդատու, հայկական պատվիրակության կազմում մասնակցել է Բաթումի և Փարիզի կոնֆերանսներին: Եղել է հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի (1918-19 թթ.) հայկական պատվիրակության խորհրդական: Դիվանագիտական ներկայացուցչություններին կից ռազմական կցորդի ինստիտուտի ստեղծման հեղինակներից ու կազմակերպիչներից է:

1919 թ. վերջերին – 1920 թ. սկզբներին սերտ կապի և համագործակցության մեջ է եղել Կ.Պոլսում գործունեությամբ

յուն ծավալած Տիգրան Դեղյանցի և նրա կողմից գլխավորվող հետախուզական խմբի հետ, որից մշտապես արժեքավոր տեղեկություններ է ստացել Թուրքիայի, նրա ռազմական ուժերի ու ռազմաքաղաքական անցուղարձի մասին և ամփոփագրերի տեսքով զեկուցել ՀՀ կառավարությանը:

Հայաստանի Հանրապետության անկումից հետո արտագաղթել է Ֆրանսիա, որտեղ հրատարակել է «Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ճակատում» գիրքը ֆրանսերենով, ինչպես նաև «ՎԷՄ» ամսագրում հողվածաշար Հայաստանի Հանրապետության և մեծ տերությունների հետ ունեցած հարաբերությունների մասին: Պարգևատրվել է ֆրանսիական «Պատվո լեգեոնի» շքանշանով:

Մահացել է Փարիզում, 1955 թվականին:



Արխիվային սուղ տվյալները փաստում են, որ, բացի իրենց գործունեությամբ մեզ քիչ թե շատ հայտնի անձանցից, հետախուզությունում և դրա ենթաճյուղերում աշխատում էին, մասնավորապես՝

- *պողպորուչիկ Լևոն Բաշինջաղյանը (հանձնարարությունների գծով սպա, այնուհետև հետախուզության ռեզիդենտ Վրաստանում).*

- *Սեմյոն Հովսեփյանը (գրասենյակի և Ղանարլուում հետախուզության վարիչ).*



Լևոն Բաշինջաղյան



Չեկույց մի խումբ սպաների ուսուցման նպատակով Ֆրանսիա գործուղելու մասին, 1920 թ.

- Արշակ Սարգսյանը (ռեզիդենտ Բաքվում).
- Գրիգորի Երամովը (դիտորդ Վրաստանում).
- շտաբ-կապիտան Մարգար Սարգսյանը.
- պորուչիկ Պյոտոր Պալիևը (հետախուզական բա-

ժանտունքի ընդհանուր մասի պետ).

- պորուչիկ Հովհաննես Պարոնյանը (Յապոն՝ Սյունիք-Չանգեզուրի հակահետախուզության ղեկավար).

- պորուչիկ Արտեմի Ահարոնովը.

- պորուչիկ Վենիամին Ներսեսովը.

- պորուչիկ Բեկզադովը:

Կառավարության և Ռ-ազմական նախարարության կողմից որոշակի ջանքեր էին գործադրվում հատուկ ծառայությունները գրագետ, բանիմաց, օտար լեզուների տիրապետող մասնագետներով համալրելու ուղղությամբ: Այդ նպատակով 1919 թ. հունվարի 21-ին զինվորական նախարարը կարգադրել է Գլխավոր շտաբին տեղեկանք ներկայացնել այն սպաների և զինվորների մասին, որոնք տիրապետում են անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներին՝ նշելով լեզվի իմացության մակարդակը, լեզուներ սովորելու վայրը և հաստատությունը<sup>46</sup>:

Հետաքրքիր է, որ այդ դժվար պայմաններում անգամ փորձ է արվել կազմակերպել հետախուզության ու զինվորական գործի համար անհրաժեշտ կադրերի համապատասխան ուսուցումը: 1920 թ. սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում ՀՀ դեսպանատան ռազմական կցորդ Քիշմիշյանը զինվորական նախարարի օգնականին ուղարկված զեկուցագրում միջնորդում է զինվորական գործի կատարելա-

<sup>46</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-204, ց. 1, գ. 104, ք. 61:

գործման նպատակով Ֆրանսիա գործուղվող սպաների ցուցակում մտցնել պորուչիկներ Եղիազարովին, Նանասովին և պողպորուչիկ Ումիկյանին՝ նշելով, որ վերջիններս բոլոր առումներով արժանի են խրախուսանքի և պատրաստ կլինեն իրենց ձեռք բերած գիտելիքները կիրառել ի նպաստ հայրենիքի<sup>47</sup>:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ընդգծել, որ ՀՀ հատուկ ծառայություններում ընդգրկված սպաները եղել են անձնուրաց և անկաշառ մարդիկ, որոնք, հաճախ պետություննից չունենալով ֆինանսական աջակցություն, սեփական միջոցների հաշվին, ամեն գնով աշխատում էին չձախողել իրենց առջև դրված խնդիրների կատարումը:

*«Պոլսից մեկնելուց առաջ, մի Դաշնակից պետութան պատասխանատու ներկայացուցիչը ինձ փորձեց համոզել, որ հրաժարուեմ իմ Հայաստանի պաշտօնից, մնամ իրենց մօտ շատ լաւ ամսականով՝ ամբողջ Արեւելքի հետախուզական գործը կազմակերպելու համար իրենց հաշուին: Առաջարկում էր տասը հազար տոլար ամսական քիճէ: Ես կտրուկ մերժեցի: Երեսանը, իմ հայրենիքս, ինձ կանչում էր, պէտք է մեկնէի», - իր հուշերում գրում է հետախույզ Տիգրան Դևոյանը<sup>48</sup>:*

<sup>47</sup> ՀԱԱ, Ֆ.Պ-276, ց. 1, գ. 154, ք. 222:

<sup>48</sup> Դ.Էդյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, N 1(247), մարտ-ապրիլ, էջ 83:

24

46  
**ПРИКАЗЫ**  
п о  
Военному Ведомству Республики Армении  
о чинахъ военныхъ.  
№ 64  
28 апреля 1919 г. г.р. Эривань.

**Назначаются:**

Начальник Отдельной Карабахской бригады Генерал-Майор Д и р у м о в ь (Daniel-Bezo) - Начальником 1-ой Армянской пехотной бригады.

Командир 2-ой бригады Армянской Дивизии Генерал-Майор О с е т ь к я н ь (Артемь-Начальником 2-й Армянской пехотной бригады.

Командир 3-ей бригады Армянской Дивизии Генерал-Майор Б а г д я с я р о в ь - Начальником 3-ей Армянской пехотной бригады.

Начальник Штаба Армянской Дивизии Генерал-Майор Штаба полковник З и т с е в и ч ь (Михаилъ Михайловичъ) и.д. Начальника Генерального Штаба.

Начальник Штаба Отдельной Карабахской бригады Генерального Штаба подполковник Ш и с у р ь - Начальником отделений Генерального Штаба.

Штаба Армянской Дивизии капитанъ Ш у м о в ь (Николай Александровичъ), штабс-капитанъ М е д в е д ь е в ь (Михаилъ Радоновичъ) и С я р к и с я н ь (Маркьяр Сергеевичъ), поручикъ Д и е р и н с к и й (Милентій Ивановичъ), А г а р о в о в ь (Артемій Никитичъ) и Н е р с е о в ь (Веніаміъ Амбарцумовичъ) и, состоящие въ распоряженіи Начальника Военнаго Штаба: Поручикъ по Адмиралтейству О в а н е с о в ь - Х а н ь - К о т у р с к и й (Артемій Никитичъ) и поручикъ Б а ш и д ж а г і а н ь (Левонъ Георгіевичъ).

Всѣ восемь Походниками Начальниковъ отделений Генерального Штаба.

Прикомандированный къ Штабу Армянской Дивизии прапорщикъ О д а б я ш я н ь (Анания Сергеевичъ) и чиновникъ военн. в р. К о д ж о л ь ц ь (Азовъ Карповичъ).

Оба въ Генеральный Штабъ чертежниками.

Начальникъ Строевого и Мобилизаціоннаго отдела Военнаго Штаба подполковникъ М а к л а в е с ь (Венедиктъ Макаровичъ) - Начальникомъ Мобилизаціонно-Военно-Административнаго отдела Военнаго Министерства.

Помощники Начальника строевого и мобилизаціоннаго отдела Военнаго Штаба капитанъ Т и х о н о в ь (Иванъ Ивановичъ) и штабс-капитанъ А б і я н ь (Константинъ Ивановичъ), Эриванскаго Караульнаго батальона - штабс-капитанъ Б я г р а м я н ь (Ара Діонисовичъ) и Начальникъ команды Военнаго штаба капитанъ К у н т и к ь (Дмитрій Дмитриевичъ).

Հրաման ՀՀ ռազմական նախարարությունում նշանակումների մասին, 1919 թ.

Հայաստանի խորհրդայնացումից հետո բռնություններ ծավալվեցին նաև հայ զինվորականության նկատմամբ: Չնայած 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 4-րդ կետում արձանագրված էր, որ «հրամկազմը որևէ պատասխանատվություն չի կրում նախախորհրդային Հայաստանի

բանակի շարքերում կատարած գործողությունների համար», դեկտեմբերի վերջին բոլշևիկները հաշվառեցին հայոց բանակի բոլոր սպաներին և 70 զինվորականի անմիջապես արքարեցին Բաքու: Դա բռնությունների առաջին փուլն էր...:

1921 թվականի հունվարին Ռուսաստան արքարվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության զինված ուժերի 1400 սպաներ, հետագայում նրանցից շատերը զնդակահարվեցին:

Այսօր հետադարձ հայացքով նայելիս զարմացնում և հիացնում է այն փաստը, որ 1918-ին, չնայած ամենուրեք տասնյակ հազարավոր գաղթականներ էին, զգացվում էր ֆինանսատնտեսական, կադրային և նյութատեխնիկական պայմանների պակաս կամ պարզապես բացակայություն, Հայաստանն, այնուամենայնիվ, աներևակայելի կարճ ժամանակում կարողացավ ձեռք բերել պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ ինքնիշխանություն, օրենսդիր ու գործադիր մարմիններ, տնտեսական-քաղաքական համակարգ, դրամ, ազգային բանակ, ներքին գործերի մարմիններ, դիվանագիտական հարաբերություններ և պետականության այլ խորհրդանիշեր: Եվ այդ ամենի շարքում իր ծանրակշիռ ու բացառիկ տեղն ունի հայկական հետախուզությունը և հակահետախուզությունը:





«Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Առաջին  
Հանրապետության հոջակուհին» վերտառությամբ  
ցուցափեղկը

Ցուցափեղկում ներկայացված նյութերն արտացոլում են 1918թ. մայիսի 21-ից 28-ը թուրքական ներխուժման դեմ հայ ժողովրդի մղած պայքարը:

Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ բշնամուն արժանի հակահարված տալ՝ վիժեցնելով Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու թուրքական ծրագիրը: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանն ու սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը: 1918թ. մայիսի 28-ին, մայիսյան հերոսամարտերից՝ Սարդարապատից, Բաշ-Ապարանից, Ղարաբիլիսայից հետո ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Ավելի քան 600-ամյա ընդմիջումից հետո, ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության, վերածնվեց հայոց բաղձալի պետականությունը:

Ցուցադրված են, մասնավորապես Սարդարապատի ճակատամարտի սխեման, լուսանկարչական նյութեր, Անկախության հռչակագրի պատճենը:



«Պետականաշինության սկիզբը» վերտառությամբ ցուցափեղկը

Այս ցուցափեղկում ներկայացված են նյութեր Հայաստանի Անկախության հռչակումից հետո պետականաշինության ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերի մասին:

Պետական կառավարման ձևի և ռեժիմի տեսակետից Հայաստանը որդեգրեց ժողովրդավարական (դեմոկրատական) հանրապետության կառուցման ուղին՝ խորհրդարանի գերակայությամբ: Հայաստանի անկախության հռչակումը նոր դարաշրջան բացեց հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Հայաստանի Առաջին Հանրապետությունը դարձավ աշխարհացրիվ հայության հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի զարգացման կենտրոն: Անկախ պետականության վերականգնումը պայմաններ ստեղծեց ազգային ինքնության վերածննդի ու զարգացման համար:

Ցուցադրված են, մասնավորապես Կառավարություն կազմելու մասին Ազգային խորհրդի հայտարարության պատճենը, Կառավարության անդամների լուսանկարները, բազմաթիվ այլ նյութեր:



«Անվտանգության համակարգի ձևավորումը» վերտառությամբ ցուցափեղկը

Ցուցափեղկում ներկայացված են նյութեր Հանրապետության անվտանգության համակարգի ձևավորման ուղղությամբ երկրի ղեկավարության ձեռնարկած քայլերի և դրանց որոշ արդյունքների մասին:

Հայոց անկախ պետականության կայացման կարևորագույն հիմնախնդիրներից էր սեփական ազգային բանակի և անվտանգության համակարգի ստեղծումը:

Ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ից, որին կից դեռևս Թիֆլիսում ձևավորվեց բանակի օպերատիվ կառավարման կարևորագույն օղակը՝ Գլխավոր շտաբն իր երեք բաժիններով: Բանակում կարևոր խնդիրներից էին նաև հետախուզական և հակահետախուզական աշխատանքների հետագա ծավալումը, կարգապահության ամրապնդումը, մարտական ոգու բարձրացումը:

Ցուցադրված են, մասնավորապես նյութեր Հանրապետության ռազմաքաղաքական դրության, բանակի ղեկավարության, կառուցվածքի, թվաքանակի և սպառազինության, հետախուզությանն ու հակահետախուզությանը հատկացվող գումարների մասին:



«Հետախուզության և հակահետախուզության կազմակերպումը» վերտառությամբ ցուցափեղկը

Յուզահանդեսի այս հատվածում ներկայացված են նյութեր Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության մարմինների ստեղծման և գործունեության պատմությունից:

Արխիվային նյութերը թեև սուղ են, բայց նույնիսկ առկա փաստերով հիմք են տալիս եզրակացնելու, որ դժվարագույն աշխարհաքաղաքական և ռազմական կացության մեջ հռչակված պետության անդրանիկ կառավարությունն իր առաջնակարգ խնդիրներից մեկն է համարել հատուկ ծառայությունների կազմակերպումը և փորձել իր շատ համեստ բյուջեից որոշակի գումարներ հատկացնել այդ գործի կազմակերպման համար, որոնք է ուղիներ դրա պատշաճ կալայացման ու զարգացման համար:

Ցուցադրված են, մասնավորապես նյութեր հետախուզության և հակահետախուզության մարմինների կազմավորման, դրանց կարգավիճակի, ՀՀ արտգործնախարարության տեղեկատվական բյուրոյի ստեղծման, արտերկրում ՀՀ դեսպանատներին կից ռազմական կցորդների ինստիտուտի մասին, օպերատիվ ամփոփագիր և այլն:



«Թշնամիների վնասագերծումը» վերտառությամբ ցուցափեղկը

Այս ցուցափեղկում ներկայացված են նյութեր Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության առանցքային ուղղության՝ Ադրբեջանի և Թուրքիայի թշնամական գործունեության դեմ պայքարի մասին:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական հատուկ ծառայությունները՝ փոքրաքանակ կադրային ռեսուրսներով և սուղ հնարավորություններով, իրենց դրսևորել են լավագույն կողմերից՝ կանխելով թշնամու քայքայիչ գործունեությունը, վնասագերծելով նրա շատ գործակալներին և զորավիգ լինելով հանրապետության անվտանգությանը: Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները ձեռք էին բերում անհրաժեշտ տեղեկություններ Անդրկովկասում ուժերի դասավորության, զորքերի տեղաշարժի և հատկապես Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ձեռնարկվող քայքայիչ գործողությունների վերաբերյալ:

Ցուցադրված են, մասնավորապես նյութեր Ադրբեջանի և Թուրքիայի թշնամական գործունեության դեմ ՀՀ հետախուզության և հակահետախուզության մարմինների աշխատանքի որոշ արդյունքների վերաբերյալ:



«Հետախուզության և հակահետախուզության կադրերը» վերտառությամբ ցուցափեղկը

Ներկայացված են նյութեր Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության մարմինների ստեղծման ակունքներում կանգնած և թշնամու դեմ պայքարին անձնվիրաբար մասնակցած աշխատակիցների մասին:

Նորաստեղծ Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների համար կադրային և նյութատեխնիկական ապահովվածության խնդիրներն ամենախոցելիս էին, քանի որ այդ ուղղությամբ աշխատանքի փորձ գրեթե չկար: Այդ դժվարին գործն իրենց ուսերին վերցրին մարտական ուղիներում քրծված մի խումբ հայ զինվորականներ: Հայկական հատուկ ծառայությունների նվիրյալներից շատերի անունները մնացել են պատմության ծալքերում և մոռացության են մատնվել: Ցավոք, շատերի անուններն էլ մեզ հասել են արդեն խորհրդային տարիներին նրանց նկատմամբ հարուցված քրեական գործերի նյութերից:

Ցուցադրված են, մասնավորապես նյութեր Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզության և հակահետախուզության մարմինների առանձին ղեկավար և ակտիվ աշխատակիցների, նրանց անցած ուղու մասին:

1. ՀԱԱ, Ֆ.Պ. – 199:
2. ՀԱԱ, Ֆ.Պ. – 200:
3. ՀԱԱ, Ֆ.Պ. – 201:
4. ՀԱԱ, Ֆ.Պ. – 202:
5. ՀԱԱ, Ֆ.Պ. – 204:
6. ՀԱԱ, Ֆ.Պ. – 276:
7. «Յառաջ», Երևան, 9 մայիսի, 1920, ք. 95:
8. «Յառաջ», Երևան, 9 մարտի, 1920, ք.2:
9. Հայ ժողովրդի պատմություն. Խմբագրությամբ Հ.

Սիմոնյանի. Երևան, 2012:

10. Դեդյեանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», ք. 1, ք. 2, ք. 4. Բոստոն, 1945:

11. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

12. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-20 թթ., Երևան, 2006:

13. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Երևան, 2009: